



329
C. I. 3





ԱՆՆՆԱԿԱՆ


ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՏՈՐ Ծ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 2, 1897

ԹԻԻ 1



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
Նախ Հաւատաւ	1
Նպատակի Մտաւարարութիւն	2
Սարկաւարուհի Մը կեանքէն	3
Վասնզատար Մարդիկ	3
Քաղցր Բնակարաններ	3
Ազէկ Նայեցէք Խոշոր Տղաքներուն	4
Բարե Սամարացի Մը	4
Անակնկալ Նուիրատուութիւն Մը	4
Կործանեալ կեանք Մը	4
Աւողջապահական Մեջոցներու Կերտու- ուութիւնն Ինչ Ըրած է Կեանքի Հա- մար	4
Կուրնեայի Թղուկներ	5
Իսկական Գտարկութիւն Մը	5
Թղթակցութիւնք	6
Եկեմէ	6
Հրդեհ և Գընճըլար	6
Ազդ	7
Հանդէս Քաղաքական	7
Իրամական	8

ԱՒԵՏԱԲԵՐ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ. Կը հրատարակուի ամէն շաբաթ օր:

Տարեկան գինն է ամէն տեղւոյ համար կանխիկ 1 1/2 մեծիտիյի, վեցամսեայն՝ 3/4 մեծիտիյի: Թղթատարի ծախքը խմբագրութեան վրայ է: Մեկ քերթի գինն է 30 փարա: Խմբագրութեան, բաժանորդագրութեան եւ քրթատարութեան պատկանեալ ամէն գրութիւնք պարտին ուղղուիլ առ Մր. Հ. Ս. Պարերն, Ամերիկան Խան, Կ. պոլիս:

Ամերիկայի Միտիոնարաց Ընկերութեան կողմանէ,
Ճ. Ք. ԿՐԻՆ, ՍՏՕՏԱՏԵՐ
Հ. Ս. ՊԱՐԵՐՆ՝ ՏՏՕՏԵՆ-ԽՊԱՅԻՐ

ՆՍԻ ՀԱԻՍՏԱ
(Ճո՞ն Ուտի)

Ուտի ով որ ես դուն որ կը բաղձաս մեղաց թողութիւն ստանալ և Սատուծոյ քով շնորհք գտնել, մի ըսեր սրտիդ մէջ. «Նախ ամէն մեղքի յաղթելու եմ, ամէն չար խօսք և գործ ձգելու եմ և ամէն բարիք ընելու եմ ամէն մարդու: Կամ նախ եկեղեցի երթալու եմ, Հաղորդութիւն ընդունելու եմ, աւելի քարոզ լսելու և աւելի աղօթք ընելու եմ»: Աւաղ, եղբայրս, բոլորովին չեղած ես ճամբէն: Տակաւին անտեղեակ ես Սատուծոյ արդարութեան և կ'ուզես անձիդ «արդարութիւնը հաստատել» իբրև հաշտութեանդ հիմ: Չե՞ս գիտեր թէ դուն մեղանելէ զատ բան մը չես կարող ընել մինչև որ հաշտուիս Սատուծոյ հետ: Ուրեմն ինչո՞ւ կ'ըսես, Նախ այս և այն բանը ընելու եմ և

ապա հաւատալու եմ: Ոչ, ոչ, նախ հաւատաւ: Հաւատաւ Տէր Յիսուս Քրիստոսի, մեղքերուդ քաւութեանը: Թող նախ այս բարի հիմը դրուի, և ապա ամէն բան լաւ պիտի ընես:

Մի ըսեր դուն քեզի. «Դեռ չեմ կրնար ընդունուիլ վասն զի բաւական բարի չեմ»: Աստուծոյ ընդունելի ըլլալու համար ո՞վ բաւական բարի է կամ եղաւ երբեք: Աղամորդի մը երբեք բաւական բարի եղա՞ւ կամ պիտի ըլլայ՞ երբեք մինչև որ ամէն բաները կատարուին լինան: Իսկ քեզի գալով, ընաւ բարի չես դուն: Քու մէջդ բարի բան մը չկայ, և ընաւ բարի պիտի չըլլաս մինչև որ Յիսուսի հաւատաս: Այլ հետզհետէ աւելի պիտի չարանաս:

Սակայն ընդունուելու համար պէտք կայ հետզհետէ չարանալու: Բաւական չար չե՞ս արդէն: Արդարեւ ես, և Սատուած գիտէ, և դուն ալ չես կրնար ուրանալ: Ուրեմն մի յաղաղեր: Ամէն բան պատրաստ է հիմա: «Ելի՛ր ու մեղքերդ լուա»: Բաց է աղբիւրը, հիմա է Գառնուկին արեամբ ճերմկնալու ժամանակը: Հիմա պիտի «մաքրէ» քեզ «զոպայի մշտիկով» և «մաքուր» պիտի ըլլաս. պիտի լուայ քեզ, և «ձիւնէն աւելի ճերմակ» պիտի ըլլաս:

Մի ըսեր թէ «ես բաւական զղջացած չեմ, բաւական չեմ զգար մեղքերուս ծանրութիւնը»: Գիտեմ: Երանի թէ աւելի զգայիր անոնց ծանրութիւնը, աւելի զղջայիր, այժմեանէն հազար անգամ աւելի: Բայց ատոր համար մի կենար: Թերևս Սատուած քեզի պիտի զգացնէ ոչ թէ հաւատալէդ առաջ, այլ հաւատալովդ: Թերևս շատ չպիտի լաս մինչև որ շատ սիրես շատ-թողութիւն գտնելով: Միևնոյն ժամանակ Յիսուսի նայէ, տես ի՞նչպէս կը սիրէ քեզ: Ուրիշ ի՞նչ բան կարող էր ընել քեզի և չըրաւ:

«Արդեօք ո՞ր մարդ կամ ո՞ր հրեշտակ
«Փրկչի նման ինձ սէր ցուցուց,
«Արեց վասն իմ վեշտ դժբերակ
«Եւ փրկութեան ինձ յոյս թողուց»:

Անոր նայէ չարունակ մինչև որ քեզի նայի և կակղացնէ կարծր սիրտդ: Այն ատեն «զլուխդ շուր» պիտի ըլլայ և

«աչքերդ արցունքի աղբիւր»:

Մի ըսեր նաև, «Ուրիշ բան մը ևս ընելու եմ քրիստոսի չեկած»: Ենթադրելով թէ Տէրդ պիտի ուշացնէ իր գալուստը, կ'ընդունիմ որ պատշաճ և ուղիղ ըլլայ անոր երևման սպասել՝ ըստ կարի ընելով ինչ որ հրամայած է քեզի: Բայց այսպիսի ենթադրութեան տեղի չկայ: Ի՞նչպէս գիտես թէ պիտի յապաղէ նա իր գալուստը: Թերևս արուսեակին պէս պիտի երևի արշալոյսէն առաջ: Ոհ, ժամանակ մի սահմաններ անոր. ամէն օր սպասէ: Ահա հիմա «մօտ է դռներուն քովը»:

Եւ ի՞նչ նպատակաւ կ'ուզես մեղքերուդ շնորհէն առաջ սպասել աւելի անկեղծ ըլլալու: Աստուծոյ շնորհաց աւելի՞ արժանանալու համար: Աւաղ, տակաւին ուրեմն կ'աշխատիս անձիդ «արդարութիւնը հաստատել»: Տէրը պիտի ողորմի ոչ թէ անոր համար որ դուն ողորմութեան արժանի ես, այլ անոր համար որ իր ղթութիւնը չպակսիր. ոչ թէ անոր համար որ դուն արդար ես, այլ անոր համար որ Յիսուս Քրիստոս քաւութիւն ըրած է մեղքերուդ համար:

Դարձեալ, եթէ օգտակար է անկեղծութիւնը, ինչո՞ւ ատոր կը սպասես հաւատք չունեցած, նկատելով որ հաւատքը միակ արմատն է այն ամէն բաներուն որ իսկապէս բարի և սուրբ են: Մանաւանդ տակաւին պիտի չարունակե՞ս մոռնալ թէ, երբ մեղքերդ քեզի ներուած չեն, ինչ ալ ընես, ինչ ալ ունենաս, Սատուծոյ քով անօգուտ են մեղացի թողութիւն ստանալու համար: Այո, բոլոր ըրածներդ, բոլոր ունեցածներդ՝ ետեղ-թողութիւն, կոխտուելու և արհամարհուելու են, եթէ ոչ երբեք ընդունելի պիտի չըլլաս Սատուծոյ, վասն զի մինչև այդ ժամանակը չես կրնար դուն Սատուծմէ շնորհք խնդրել իբրև պարզ մեղաւոր մը, յանցաւոր, կորսուած և անյոյս, որ չունի յիշելու արժանաւորութիւն մը բաց ի սիրելի Որդւոյնէն, «որ քեզ սիրեց և ինքզինքը քեզի համար տուաւ»:

վերջապէս, ով մարդ, ով որ ես, գուն որ վրադ «մահուան վճիռը» կը պահես, և Աստուծոյ բարկութեան ենթարկուած ես, քեզի չըսեր Տէրը, «Կատարելապէս հնազանդէ բոլոր հրամաններուս, և պիտի ապրիս», այլ կ'ըսէ, «Հաստատ Տէր Յիսուս Բարձրագոյն», «Կրօնական» Հաւատքին խօսքը քեզի մօտ է: Հիմա, այս բոլորիս, այս վայրկեանիս, ներկայ վիճակիդ մէջ, ով մեղաւոր, ինչպէս որ ես, հաւատա Աւետարանին, և ահա պիտի լսես, Ես քու անիրաւութիւններուդ ներող պիտի ըլլամ, և քու մեղքերդ ու անիրաւութիւններդ ա'լ պիտի չյիշեմ (Եբր. Ը. 12):

ՆՊԱՍԻ ՄՍՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ
(Խմբագրական)

Անցեալ չորեքշաբթի օրուան (Դեկտ. 11/23) Բիւլետենի խմբագրական մը ունի «Հացի Բաշխում, Միջոց Կրօնի Մաւաւման» խորագրով: Նկատելով միօրինակ յարգանքը եւ սիրալիր ակնարկութիւնները զորս մեր պաշտօնակից եղբայրը Աւետարանական Ամերիկացիներուն ըրաւ Բիւլետենի նախորդ թիւերուն մէջ, կրնանք կը կարծենք ապահովապէս ենթադրել թէ իր նպատակը չէ յարուցանել լրագրական վէճ մը, որուն մէջ փափաքելի չէ մեզի բաժին ունենալ: Կը հրաւիրէ մեզ իրողութիւններն յայտնել ինչ ինչ զրոյցներու նկատմամբ որ իր ականջն հասեր են: Ուրախութեամբ կ'ընենք զայդ:

Միսիոնարներուն գիրքին յատուկ պարագաները շատ տեղ զանոնք հարկադրեցին նպաստի գործով զբաղիլ: Իրենցմէ ոմանք աղաչեցին որ ուրիշներ ղրկուին բաշխման գործին հսկելու, եւ ցնծութեամբ ողջունեցին գալուստը Կարմիր Սաչի Բնկերութեան գործակալներուն, որոնց ողորմասիրական գործին ղիւրութիւններ ընծայեց կառավարութիւնը եւ որոնք շատ բարիք գործեցին: Սակայն Անգղիոյ մէջ եւ այլուր բարձրաստիճան անձեր պնդեցին թէ, ըստ որում միսիոնարներն արդէն տեղւոյն վրայ կը գտնուին, գիտեն տեղական լեզուները եւ կը հասկնան ժողովրդին վիճակը որպէս չեն կարող հասկնալ օտարականները, բաշխման գործին հսկելու ամենէն յարմար անձերն անոնք են: Եւ ուստի միսիոնարներն յանձն առին զայդ ուրախութեամբ եւ կարօտեալներուն հանդէպ ճշմարիտ սէրէ եւ համակրանքէ բխող եռանդով մը եւ անձնուրութեամբ: Ուր որ անգղիական հիւպատոս մը հաստատուած է, նա եղած է նախագահ յանձնախումբին որուն յանձնուած է Անգղիոյ ղրկուած գրամը, թէեւ մատակարարութեան գործը մեծ մասամբ միսիոնարներուն յանձնուած է: Այդ հիւպատոսներէն մին Անգղիոյ նպաստամատոյց յանձնախումբին սապէս կը գրէ. «Թպէ տուէք ինձ վկայ կանգնիլ այն ողջամիտ եւ գործնական գրութեան, որով նպաստի բաշխումն ի գործ դրուած է Ամերիկեան միսիոնարներուն ձեռամբ: Երբեք գրամ չէ տրուած առանց լիովի եւ կատարեալ քննութեան, եւ բաշխումը միշտ եղած է առանց կրօնի խտրութեան, յարանուանական նախապաշարունակներու եւ կրօնափոխութեան գաղափարի: Անոնց խնամոյց տակ մատակարարուած նպաստի գումարներուն ամէն մասնակցող անձ կրնայ

վստահ ըլլալ թէ գրամը լաւ գործածուած է:» Կը հաւատանք թէ նպաստի բաշխման մէջ միսիոնարներուն գործակցող հիւպատոսներուն ամէնքը պատրաստ են նոյնպիսի վկայութիւն տալու:

Զրոյցներէն մին որ Բիւլետենի խմբագրին ականջն հասեր է՝ սա է թէ Կէտիկիւնայի մէջ միսիոնարուհի մը Քիրեն ղիմող Հայուհիներուն ըսեր է թէ նախ պէտք է աղօթել եւ երգել, եւ այս արարողութեան կատարումէն եւ երկար քարոզէ մը ետքը, ծանուցեր է յապուշ կրթած կարօտեալներուն թէ այն օրն հաց պիտի չբաշխուի, բայց եթէ կիրակիի հոգեւոր պաշտօնին ներկայ ըլլան, սովորական նպաստն այն առթիւ պիտի ընդունին: Մենք անձամբ հետազօտեցինք այս խնդիրը եւ իմացանք Կէտիկիւնայի միսիոնարուհիներէն թէ իրենք երբեք կիրակի օր նպաստ չեն բաշխեր, եւ թէ շաբթու մէջ կանանց յատուկ աղօթքի ժողով ունին չորեքշաբթի օր եւ ուրիշ երկու օր ալ նպաստ կը բաշխեն: Այս կարգադրութիւնը ղիմամբ ըրած են որպէս զի մի գուցէ ըսուի թէ նպաստի գործն իրբեւ միջոց կը գործածեն կիները կաշառելու որ հոգեւոր պաշտամունքի ներկայ ըլլան: Իրենց բաղձանքն է որ ժողովի եկողները հոգեւոր օգուտ քաղելու համար դան, եւ իրենց կանոնէն երբեք չեն չեղած ի բաց առեալ մէկ երկու անգամներ քանի մը շաբթ առաջ, երբ քանի մը կիներ, որ յայտնապէս մեծ կարօտութեան մէջ էին, չորեքշաբթի օր ներկայանալով ըսեր են թէ իրենք շատ հեռուէն եկած են կարծելով որ այդ օրը նպաստ կը բաշխուի: Խառնակի Ամերիկեանները նոյն կանոնին հետեւած են, այսինքն նպաստ չբաշխել չորեքշաբթի օրեր երբ աղօթքի ժողով տեղի կ'ունենայ: Ուրիշ օրեր ալ տրուած նպաստը, որչափ որ հնար է իրենց ստուգել, ամենէն կարօտ եկողներուն կը տրուի առանց օրէ ուրիշ նկատումի:

Բիւլետենի ընդարձակ կտոր մը կը քաղէ Սարբերդէ ղրկուած նամակէ մը, որ ծանր ամբաստանութիւններ կ'ընէ տեղւոյն միսիոնարներուն դէմ: Կ'ըսէ թէ Քիրենց ղրկուած մօտ 40 հազար ոսկիի մէկ մեծ մասը տրամադրելի ըրին հոգիներու վիճակն հասկնալու:» Ձեռք կարող հետազօտել անոր բոլոր խօսքերուն ճշմարտութիւնը, բայց անհիմն է անոր սա յայտարարութիւնը թէ միսիոնարներն Ամերիկեան Պորտէն 900 ոսկի ընդունած են «հաւատքին ընտանիներուն» համար, վասն զի Պորտը նպաստի գրամ տուած չէ բնաւ: Նպաստամատոյցներ երբեմն գումարներ ղրկած են Պորտի գանձապետին ձեռամբ, բայց Պորտը բնաւ իրաւունք չունի գրամին խառնուելու եւ երբեք չձեռնարկել ըսել թէ ինչպէս եւ որո՞ւ համար պիտի գործածուի այն: Բոլոր իր եկամուտը իր կրթական եւ հոգեւոր գործին համար պէտք է: Սարբերդի միսիոնարներն իրենց ղրկուած գրամը բաշխելու համար յանձնախումբեր կազմած են: Ընդհանուր յանձնախումբին նախագահն է թեմին կամ գաւառին առաջնորդը, եւ ամէն ուրեք տեղային յանձնախումբեր կազմուած են որ կը բաղկանան Լուսաւորչականներուն եւ Բողոքականներուն երեւելիներէն: Կ'ըսենք թէ այս է անոնց կանոնը, թէեւ տեղ տեղ դժուարութիւն կրած կրնան ըլլալ յանձնախումբեր կազմուել, ինչպէս գիտենք թէ կրօնեցաւ մայրաքաղաքիս շատ մօտ եղող տեղ մը, ուր Լուսաւորչական քահանաներ իրբեւ

կողմնակալ կամ իրբեւ այլ ինչ ամբաստանուելու երկիւղով յանձն չառին օգնել կարօտեալներու ցուցակի մը պատրաստութեան գործին:

Բիւլետենի Սարբերդի թղթակիցը կը յիշէ խօսքեր այնպիսի միսիոնարներու եւ միսիոնարուհիներու որ զմարդիկ կը յորդորեն աղօթք ընելու եւ անձկութիւն կը ցուցնեն անոնց հոգեւոր վիճակին համար: Մենք ծուռ բան մը չենք տեսներ ատոր մէջ, եւ յիշելու ենք թէ այդ համաձայն է այն նպատակին որո՞ւ համար այս երկիրս եկան անոնք: Եթէ նպաստ ստանալու եկող խեղճ որբ տղու մը յորդոր կարգան լաւագոյն օրերու յուսալու երբ կարենայ իր միտքը զարգացնել եւ կրթութիւն մը ստանալ, ծուռ բան կ'ընեն: Եւ եթէ չբաւորութեան եւ նեղութեան մէջ եկողներուն յորդոր ուղղեն Աստուծոյ ապաւինելու եւ խօնարհ եւ սուրբ կեանքով ջանալու Փրկչին ծառայել, որ մեռաւ իրենց փրկութեան համար, ծուռ բան կ'ընեն: Մենք պիտի ըսէինք թէ այդ ամէն եկեղեցւոյ բոլոր քրիստոնեայ ուսուցիչներուն յարմար գործ է, գործ մը՝ որուն մէջ Լուսաւորչական եւ Բողոքական կղերները եւ իրենց քրիստոնեայ ընկերակիցները կրնան վայելապէս գործակցիլ, ինչպէս կը գործակցին նպաստի բաշխման մէջ:

Ոմանց համար դժուարութիւնը սա է որ չեն կարող մարդոց հոգեւոր օգտին համար ցուցուած եռանդը եւ կրօնային ծաւալման համար եղած ջանքը իրարմէ զանազանել: Մենք չենք ըսեր եւ չենք ալ հաւատար թէ փրկութիւնը մասնաւոր եկեղեցւոյ մը հետ կապակցեալ ըլլալէ կախում ունի: Այսպիսի խօսք մը Աստուծոյ իմաստութեան եւ արդարութեան դէմ ամբաստանութիւն կը թուի մեզի: Աստուած արտաքին կապակցութեան չնայիր, այլ նկարագրի: Անոր սուրբ կամքին ամենէն աւելի համաձայն գործող քարոզիչը այն է որ զմարդիկ կը յորդորէ Բրիստոսի հաւատալ, զԱստուած սիրել եւ մաքուր եւ օգտաշատ կեանք մը վարել: Երբ մարդ մը այսպէս կ'ընէ, իր եկեղեցական կապակցութիւնը երկրորդական կարեւորութիւն ունի: Եւ մենք գիտենք թէ բոլոր մեր Ամերիկացի աշխատակիցները մեզի հետ միանալով պատրաստ են ըսելու թէ արժէք չունի կրօնափոխութիւն մը որ շահու ակնկալութեամբ կամ երկիւղի պատճառաւ տեղի կ'ունենայ: Տասը փարա իսկ չենք տար ամբողջ նաւ մը լեցնելու չափ բազմութեամբ Բողոքականներու համար որ հացով կամ գրամով գնուած են:

Սարբերդի թղթակցին պատմութիւններն հաւանօրէն իրողութեան հիմ մը ունին, բայց սաստիկ չափազանցուած եւ խեղաթիւրուած են իր գրչին տակ: Մենք անձնապէս ծանօթութիւն ունենալով անոնց հետ որոնց վրայ կը գրէ նա՝ գիտենք եւ վստահ ենք թէ, եթէ կարելի ըլլայ անկողմնակալութեամբ քննել այդ պատմութիւնները, նաեւ Բերդակցի քարոզչին վրայ ըսուած խօսքերը, պիտի տեսնուի թէ անտեղի են եղած զրպարտութիւնները: Թղթակիցը կը գրէ դառնութեամբ մը որ բնականապէս կարծել կու տայ թէ ինք անձնական վիշտ մը կամ վէճ մը ունի որ գրելու շարժառիթ եղած է իրեն: Վստահ ենք թէ ինք գաւառին ժողովրդեան զգացման թարգմանը չէ: Նպաստի գործին մէջ գործակցութեան բերմամբ Լուսաւորչականները եւ Բողոքականներն իրարու համար աւելի խորին սէր

եւ յարգանք կը տածեն հիմա: Իբրեւ կանոն, Բողոքականները բողոքական եւ Լուսաւորչականները լուսաւորչական մնացած են: Բայց աւելի լաւ բարեկամ եւ ընկեր եղած են փոխադարձաբար: Կը յուսանք որ մնայուն շահ մը ըլլայ այս: Ներկայ ներդրումները շուտ պիտի անցնին: Զօրաւոր յոյս ունինք թէ ձմեռնային այս եղանակէն ետքը արտաքին օգնութեան քիչ կարօտութիւն պիտի մնայ: Նպաստի մատակարարութիւնը որ ժամանակ մը մասամբ ընդհատեց միսիոնարներու եւ ուրիշներու կանոնաւոր գործը պիտի դադրի: Ընդհանուր ներումը զոր վէհն. Սուլթանը բարեհաճեցաւ շնորհել, եւ բարենորոգումները զորս գործադրելու վեհապետական իր կամքն յայտնած է, լաւագոյն օրերու բարեգուշակ նշաններ են կը յուսանք: Մենք յուսով կ'աղօթենք որ այսուհետեւ խաղաղութիւն եւ բարգաւաճում տիրեն այս երկրին մէջ: Իցիւ թէ ապագային մէջ ոչ միայն քրիստոնէական եւ կեղեցիները, այլ եւ երկրին բոլոր ազգերը եղբայրական ոգով բնակին իրարու հետ:

Կ'ուզենք ուղղել սխալ լուր մը եւս որ անցեալ ուրբաթ (դեկտ. 13/25) սպրդեցաւ Բիւրօստի մէջ, Կէտիկփաշայի Ամերիկացի միսիոնարութիւնները Գերմանիա զաւակ զըրկող մայրերէ պահանջած չեն ստացիս պայման մը ստորագրել թէ ա'լ անոնց երեսը տեսնել չեն ակնկալեր: Մայրերն իրենց զաւակները բերած եւ խնդրած են որ զըրկուին, եւ Ամերիկացիներն անոնց յիշեցուցած են սա կարելիութիւնը թէ ա'լ չկրնան թերեւս տեսնել զանոնք, յիշեցուցած են որ պէտք զի որոշում տալէ առաջ լաւ խորհիւն իրենց անուրբ քայլին վրայ: Միակ գրութիւնը որ եղած է Գերմանացի բարեկամներու կողմէ զրկուած գործակալէն եղած է, եւ ինչ որ այդ գործակալն արձանագրած է՝ անուն, տարիք եւ տղայոց եւ իրենց ծնողաց վերաբերեալ անձնական ուրիշ իրողութիւններ են: Մենք բոլորովին համամիտ ենք Բիւրօստի երբ կ'ըսէ թէ լաւ է որ կարօտեալ տղայք, իբրեւ կանոն, հոս մնան, եւ կը յուսանք թէ անոնց հարկաւոր բոլոր խնամքը եւ կրթութիւնը տալու բաւական միջոց պիտի գտնուի առանց զանոնք օտար երկիր զրկելու: Նաեւ անկեղծութեամբ կը յուսանք որ «քայքայուած զաւառային թեմական իշխանութիւնները վերակազմելու եւ կանոնաւորելու համար» Բիւրօստի միւս յօդուածին մէջ յայտնուած բաղձանքն իրագործուի:

Դեկտ. 14/26ի Բիւրօստի խմբագրական հաճոյքով կարդացինք: Մեր պաշտօնակցէն շնորհակալ ենք գնահատութեան անոյշ խօսքերուն համար զորս կ'ուզէ նպաստ բաշխող միսիոնարներուն եւ միսիոնարութիւններուն: Մեր շնորհակալութեանց հետ նաեւ անկեղծօրէն երկարատեւութիւն եւ յաջողութիւն կը մաղթենք Բիւրօստի:

ՍՍ.ՐԿԱՒՍ.ԳՈՒՀԻԻ ՄԸ ԿԵԱՆՔԷՆ

Հովիւ մը թուղթի կտորի մը վրայէ կարգաց հետեւեալը. «Այսինչ փողոցին մէջ կին մը կայ որ օգնութիւն կը խնդրէ ազօթքով:» Տարաւ այդ թուղթը սարկաւազուհիին, եւ քոյր մը զրկուեցաւ տեղեկութիւն հաւաքելու համար: Հակառակ բոլոր զգուշութեան զոր ըրաւ այդ քոյրը, երբ խեղճ կինը կուսեց անոր այցելութեան նպատակը, զառնապէս լացաւ, գոչելով, «Ո՛հ, այս ինչպէս իմացուեցաւ:» Սակայն հիւանդ եւ բոլորովին չքաւոր մայր մը ըլ-

լալով չկրցաւ չընդունիլ ուտելիքը զոր սարկաւազուհիին բերած էր տղայոց: Սարկաւազուհիին համակրանքը եւ բարեկամանալու իրական բաղձանքը նկատելով վերջապէս վստահացաւ անոր:

Խման ամուսնոյ մը հին ցաւալի պատմութիւնն է սա: Տղաքը մաշած նիհարցած էին իրական քաղցէ, կինը մահուան դուռն հասած էր, մինչ ամուսինը խմաններու յատուկ ցնորքներով իր անկողինն ոտքը կը ճչէր: Այդ ամէն դժբախտութիւններուն մէջ կինը պահած էր իր հաւատքը, սակայն իր խելքը տկարացած էր, եւ օր մը սարկաւազուհիին ըսաւ, «Գիտե՞ս ինչ ըրիր դուն: Եթէ բոլոր կեանքիդ մէջ ուրիշ բան մը չըրիր, գէթ զիս անձնասպանութենէ փրկեցիր:» Ամիսներով այս քոյրը կնոջ բարեկամին եղաւ: Թէ բարեկամն ինչ կը նշանակէ այս պիտի պարագաներու մէջ, միայն փորձանունները կրնան հասկնալ:

Սարկաւազուհիին միջոցաւ օգնութեան կարօտ տիկին մը ուրիշ տիկինի մը զըրկուեցաւ, եւ իր յօժարափոյթ եւ արդիւնաւոր ծառայութեամբ այնպէս հաճելի եղաւ որ ոչ միայն լաւ վարձք ստացաւ, այլ նաեւ կարասի եւ շատ մը մաքր մուկ բաներ, որոնք իր տխուր բնակարանը տնավայել վիճակի մը վերածեցին: Վատառողջ աղջկը բժշկի մը խնամքը վայելեց, պղտիկ տղայոց հազուստ տրուեցաւ եւ մանաւանդ գործ գտնուեցաւ որով ընտանիքն հիմա ինքնօգնութեամբ կ'ապրի: Երբ սարկաւազուհիին ամառնային պարապուրդի գնաց, փափուկ աղջկին իր հետ տարաւ շաբթուան մը համար: Այդ առաջին անգամն էր որ խեղճ աղջկը հրաւիրուեցաւ հիւրընկալուիլ անուշիկ ընտանիքի մը մէջ:

Չմբան ցուրտ օր մը ընտանիք մը գտանք որ բնաւ վաճելափայտ եւ ուտելիք չունէր: Տղաքը ցուրտէն լացած էին գիշերը, այնպէս որ մարդն յուսահատութենէն ստիպուեւր էր կտորտել աթոռները եւ վաճել որպէս զի ստուելով չմեռնէին տղաքը: Անմիջապէս աճուխ, ուտելիք եւ անկողին զըրկուեցաւ անոնց: Երբ խեղճ մայրը ջանաց իր շնորհակալութիւնն յայտնել, այցելուն ըսաւ անոր, «Ինձի նայելու չես, այլ աւելի անդին: Աստուած է որ զիս քեզի զրկեց, եւ Ան է որ կը պատրաստէ նպաստը զոր քեզի կը բերենք:»

ՎՏԱՆԳԱՒՈՐ ՄՍՐԻԻԿ

Քայքայուած խորտակուած նաւերու ցիրուցան եւ երբեմն աչքի անտեսանելի եղող բեկորները ծովերու վրայ կը տատանին երկիւղ ազդելով ամէն նաւագի եւ վտանգ սպառնալով իրենց առջեւ գտնուող ամէն նաւու: Իրենք կը պատկանին ընկղմած նաւերու, որոնց նաւազները կամ խեղդուած են կամ ազատուած: Կամ կը պատկանին փոթորկի միջոցաւ ծովեզերքէն քշուած տարուած նաւերու: Զրով ուռած կայմեր եւ ուրիշ կտորներ հովերէ եւ հոսանքներէ տարուբերուելով կը ծփան շուրին երեսը՝ զարնելու համար վաճառականական նաւուն, մինչ սա կ'անցնի մութ ատեն կամ փոթորկի պահուն: . . . Այս աշխարհի վրայ մարդիկ կան որ այս բեկորներուն նման կը թուին: Քշուելով քշուելով չար ունակութիւններու եւ չար սովորութիւններու մէջ ինկած են, եւ յուսահատ յուսահատ կը տարուբերին՝ վտանգ սպառնալով ընկերութեան, անէ՛ք իրենց անձերուն, եւ սպասելով այն ժամանակին երբ տակաւ

տակաւ մաշելով եւ հետզհետէ աւելի ցած նայով պիտի տեսնուեն թանան յաւիտենական կործանման եւ մոռացման խոր շուրեքուն ներքեւ: Յորչափ ժամանակ ողջ մնան, չար եւ վտանգաւոր ազդեցութիւն մը կ'ըլլան ուրիշներուն համար, պատրաստ խորտակելու եւ ընկղմելու ամէն անոնք որ պատահամբ կը հպին իրենց աւերեալ կեանքերուն:

ՔԱՂՅՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Ամենէն երջանիկ, ամենէն քաղցր, ամենէն գողտրիկ բնակարանները անոնք չեն ուր վիշտ մտած չէ, այլ անոնք՝ ուր ցաւեր եւ վիշտեր այցելած են եւ ուր Քրիստոսի մխիթարութիւնը վայելուած է: Նոյն իսկ վշտաց յիշատակութիւնը մեղմիկ օրհնութիւն մըն է որ միշտ կը հանգչի ընտանեաց վրայ, ազօթքի յաջորդող լուսթեան նման: Աստուծոյ զրկուած օրհնութիւն կայ վշտի ամէն մէկ բեռան մէջ: Խրիմու ճակատամարտներէն մէկուն մէջ թնդանօթի ուռմբ մը ինկաւ ամրոցի մը ներսի կողմը, պատուեց գետինը եւ գէշ կերպով աւրշտեց տեղւոյն զրախտանման գեղեցկութիւնը: Բայց այն տգեղ պատուածքէն բղիւսեց շուրի աղբիւր մը, կենդանի աղբիւր մը, որ շարունակեց հոսել անկէ ետեւ: Այսպէս վշտաց հարուածները կը պատուեն մեր սիրտերը, բայց մեղի համար կը բանան օրհնութեան եւ նոր կեանքի աղբիւրներ:

Ասոնք ներդրութիւններու բերած օրհնութիւններու ակնարկութիւններ են: Եթէ մեր ծանր բեռներն յօժարակամ ընդունինք, պիտի օժտեն մեզ զօրաւոր եւ աղիւ նկարագրով: Եթէ մեր փորձութիւնները եւ դժուարութիւնները զիմաւորենք արիւրաբար, անոնք զօրաւոր դնդերներ եւ ջիղեր պիտի հիւսեն մեր հոգիներուն մէջ: Եթէ մեր ցաւերը եւ վիշտերը կրենք քաղցր վստահութեամբ եւ հպատակութեամբ, աւելի պիտի մաքրեն զմեզ եւ պիտի հարստացնեն Քրիստոսով: Ամէն բեռան մէջ, զոր Աստուած կը դնէ մեր վրայ, օրհնութիւն մը կայ մեղի համար, միայն եթէ ընդունինք զայն:

ԱՂԷԿ ՆԱՅՅՅԷՔ ԽՈՇՈՐ ՏՂԱՔՆԵՐՈՒՆ

«Չար մարդոց մեծ մասը» կ'ըսէ նշանաւոր բժիշկ մը, «չար եղան տասներեք եւ տասներեք տարիքներուն մէջտեղը: Այդ տարիները նոյն յարաբերութիւնն ունին այրութեան հասակին հետ, ինչ որ կեանքին առաջին երեք տարիները ունին մանկութեան հասակին հետ, եւ աւելի մեծ է անոնց կարեւորութիւնը:» Եւ սակայն միշտ կը տեսնենք մայրեր որոնք մինչ իրենք ըրենք կը զոհեն մանկան համար, նոյն ժամանակ կը թուի թէ բոլորովին անտարբեր են նոյն տղին համար երբ նա կը հասնի անզուսպ տարիքին: Տղայութեան հասակէն այրութեան հասակին անցը շատ անգամ յանկարծ տեղի կ'ունենայ, եւ տղան այս ժամանակամիջոցին մէջ սովորաբար չափազանց մեծցած կ'ըլլայ, նաեւ ժանտաբարոյ, դաժան եւ ինք իրեն հաւնող, համառօտ խօսելով՝ առ հասարակ անհաճոյ, ինչպէս իր բարեկամները չեն վարանիր իմացնել իրեն: Բայց պէտք է միտք բերել թէ այդպիսի տղի մը համար շատ փափուկ է այդ ժամանակը: Արագ աճումը եւ զարգացումը օստիկ կ'աղղեն անոր ջիղերուն եւ ոյժին վրայ, եւ զանիկա կ'ընեն դիւրագրգիւ, ծոյլ եւ դժգոհ: Մեծցած

խոշորացած է այնպէս որ յարմար չէ պզտիկներու հետ խաղալու, եւ սակայն երիտասարդներուն ընկերութեան մէջ ալ չընդունուիր: Եթէ անոր ծնողքները իր գլխուն թողուն զանիկա այս ժամանակ, վտանգ կայ որ հետզհետէ ըլլայ անասնձ, եւ անյոյս կերպով հետանայ երթայ անոնցմէ: Միայն խիստ հակողութեամբ եւ կաթողին խնամքով կրնան մեր տղաքները այնպէս առաջնորդուիլ եւ անցնիլ վաղահաս մարդկութեան վտանգներուն մէջէն՝ որ իրենց Աստուածային վարդապետին նման ածին ոչ միայն իմաստութիւնով ու հասակով, այլ նաեւ «Աստուծմէ ու մարդոցմէ շնորհք գտնելով»:

ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՅԻ ՄԸ

Օպէրլինոս, Գաղղիացի քաղցրաբարոյ մարդասէրը, զթուրթեան շատ մը գործեր ըրաւ առանց զանոնք վայելողներուն յայտնելու թէ ուրկէ՛ կու գար իրենց օգնութիւնը: Բայց օր պիտի գայ երբ արդարութեամբ պիտի հատուցուի անոր՝ բուն իր գրամովը:

Շատ խիստ ձմեռուան մը մէջ կը ճամբորդէր Ալլաասի լեռներուն մէջէն, երբ վերջապէս զգաց թէ քունը կը յաղթէր իրեն, վասն զի երկար ատենէ ի վեր յոգնած էր: Բայց ինք զիտէր որ եթէ իր թմրութեան չյաղթէր, պիտի քնանար՝ ա՛յլ չարթնալու համար: Սակայն վերջապէս քունը տիրեց անոր, եւ ինք կորսնցուց ինքզինք: Ձինք այս դիրքին մէջ նախախնամաբար գտաւ կապոյտներ հագած սայլավար մը որ ստիպեց զնա իրեն տուած կերակուրը ուտել: Օպէրլինոս շնորհակալութեամբ առաւ կերակուր, եւ քիչ ատենէն կարող եղաւ իրեն օգնող այն բարի մարդուն սայլը երթալ, եւ տարուեցաւ ամենէն մօտ գտնուող գիւղը: «Անունդ ըսէ ինձի», ըսաւ զինք ազատողին, «որպէս զի յիշեմ զայն աղօթքներուս մէջ»: «Եթէ գուն ըսես ինձի բարի Սամարացիին անունը, ես ալ իմ պիտի ըսեմ», պատասխանեց սայլավարը, որ յետոյ գնաց իր ճամբան: Եւ բարի Օպէրլինոս պէտք էր գոհ ըլլար այդ պատասխանէն:

ԱՆԱԿՆԿԱԼ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԸ

Եկեղեցիի մը տրուած նուէրներուն մէջ կը գտնուի ճոխ կալուած մը զոր նուիրողին անունը քաջածանօթ է բայց ոչ թէ եկեղեցիներու կամ քրիստոնէական գործի կապակցութեամբ: Այս նուէրին շահը յաւկայած է յիշեալ եկեղեցւոյն աղքատներուն օգնութեան համար:

Եկեղեցւոյն հովիւը եկեղեցւոյ նուիրատուներուն անուանց երկար ցանկը բարեկամի մը ցուցած ատենը ըսաւ, «Ինչ կը կարծէք թէ է այն նուէրը ընողին անունը»: «Ձտրմանալի է որ այդպիսի մարդ մը փափուկ զգացում մը կրէ իր սրտին մէջ, ինչպէս գտաք զայն»: «Սա կերպով. Ես յաճախ կ'անցնէի անոր փառաւոր տանն առջեւէն, եւ ձմեռ մը ձերուհի իռլանտացի կնոջ մը դէմքը ընտանի եղաւ ինձի, վասն զի կը տեսնէի որ այդ կինը զուրս կը նայէր մէյմը մէկ պատուհանէն մէյմը ուրիշ պատուհանէ մը: Միշտ սեւեր հագած կ'ըլլար: Բայց երեսը այնպէս անհանգիստ, յոգնած եւ անձկոտ կ'երեւնար որ կարելի չէր ինձ ու շաղրութիւն չտալ: Վերջապէս հետզհետէ կարող եղաւ որոշել զիս անցորդ բաղմութեան մէջէն, եւ ժամանակ ետքը ե՛րբ որ կ'անցնէի անկէ, զլսարկս հանելով կը բարեւէի զանիկա, գիտնալով թէ ինքն ալ

պիտի պատասխանէր գոհունակ ժպիտով մը որ իր անուշ ընութեան արտայայտութիւնն էր:

«Գարնան սկիզբները արեւուտ առաւօտ մը երբ նոյն փողոցէն վեր կ'ելլէի, տեսայ զինքը որ այն փառաւոր տան դրան մարմարինն աստիճաններուն վրայ նստած գուլպայ կը հիւսէր, եւ մինչ կը մօտենայի, ըսի, 'Բարի լոյս, մայրիկ': 'Բարի լոյս, տէր իմ', ըսաւ, 'ձեզի՛ ճամբայ կը նայէի': Քիչ մը կը նստի՞ք: 'Շնորհակալ եմ', ըսի, բայց մինչ կայնած էի զլսարկս ձեռքս, ըսաւ, 'Պրաւ ձեր սովորութիւնը չէ, բայց ինչո՞ւ համար են այս զեղեցիկ աստիճանները, եթէ նստելու համար չեն: Միայն թէ այս առաւ ըսաւ ինձի տղաս, Մայր, դուն ինչո՞վ երջանիկ կ'ըլլաս: Ինչու որ գիտէ թէ ես գոհ չեմ, գրեթէ խելքէս ելայ երբ իմ ձերուկ մարդս մեռաւ եւ իռլանտայէն եկայ հոս բնակելու համար: Եւ ըսի, Երջանիկ կ'ըլլամ աստիճաններուն վրայ նստած հիւսելով եւ անցնող զարձոգները զիտելով: Տղաս ալ ըսաւ, Շատ աղէկ մայր, այդպէս ըբէ ուրեմն, եւ հոս եմ հիմա: Իր կինը խենդ է. եւ խեղճ տղուս հետ կ'ուրկընէ այս վայրկեանիս: Ո՛հ, կ'ուզեմ ըսել իրեն որ զիս իռլանտա ետ զրկէ, ինչու որ հոս շատ առանձին եմ, կով մը չունիմ քովս, ոչ ալ հաւու ձագ մը, կամ այժ մը որուն հոգ տանիմ: Պիտի ըսէ որ պզտիկ ագարակ մը գնէ իր բոլոր հաւերով եւ ուզած կենդանիներովը, եւ թող աղքատիկ մայրեր իրենց զաւակներով զան եւ աղէկ ժամանակ անցընեն հոն: 'Կ'ընեմ ատանկ, հաւատա որ կ'ընեմ', ըսաւ, եւ հետեւեալ օրը աստիճաններուն վրայ նստած կը սպասէր խնդրելու համար ինձմէ որ այդ բանին վրայ խօսէի իր որդւոյն:

«Աղէկ խորհուրդ է այդ, ըսաւ որդին, 'եւ գործադրութիւնը շատ ուրախութիւն պիտի տայ ինձի: Մայրս իր ունեցածը ինձի հետ բաժնեց մանկութեանս ատենը. ես ալ իմ ունեցածս իրեն հետ պիտի բաժնեմ իր ձերութեան ատենը»:

«Ազարակը գնուեցաւ, եւ մինչ կ'ապրէր խեղճ մայրը, կատարելապէս երջանիկ էր, իրեն ապրուստի միջոց մը եղած էր այն: Մեռնելէն ետքը որդին եկեղեցիին նուիրեց այն կալուածքը եւ գումար մըն ալ ստակ, բայց խնդրելով որ իր անունը երբեք չերեւայ իրբեւ նուիրատու, վասն զի կը խորհէր թէ այն ատեն իրբեւ նուէր արժանիքը կը կորսնցնէր»:

Մարդասիրութիւնը եւ ճարպիկութիւնը կը յաջողին կերպով մը երեւան հանել մարդկային սիրտերու բարի կողմը: Քաղցին այդ առանձնակեաց կնոջ տուած բարեւը «բաժակ մը պաղ ջուր» էր որ ընդունեց իր վարձքը:

ԿՈՐԾԱՆԵԱԼ ԿԵԱՆՔ ՄԸ

Ասկէ քանի մը տարի առաջ իբր յիսուն տարեկան մարդ մը իր եղբոր տունէն մեկնեցաւ մինակ եւ որչափ որ գիտցուած էր՝ հետը բան չտարաւ, եւ ա՛յլ ետ չգարձաւ: Շուտ յետոյ ընդունուած նամակէ մը եւ իր մտքի քաջածանօթ վհատեալ վիճակէն դատելով անոր այսպէս մեկնելուն ցաւալի մեկնութիւններ տուին բարեկամները, եւ մեծ վախի մէջ էին: Անոր անհետացումը այն իստիճակուոր անհետացումներէն մէկն էր որուն ընծայուած առ ձեռն պատճառն էր յուսահատութիւն եւ անձնասպանութիւն:

Յիշեալ մարդն էր հանճարեղ արհեստաւոր եւ հնարիչ մը որուն մենաշնորհեալ

գիւտերը կրկին եւ կրկին շահ կը բերէին իր գործատէրերուն: Բայց խեղճին մտային գործն կարողութիւնը գացած էր եւ ձեռքը կորուսած էր իր ճարտարութիւնը: Ոգեկից ըմպելիքը որ տարինն առաջ զնա գերած էր, անպիտան ըրած էր զնա երբ հազիւ անցած էր իր առոյգ հասակը: Մարդը իր դրացիներէն մէկուն, տիկնոջ մը, աղատորէն խօսած էր իր անհետացումէն քիչ առաջ: Ահաւասիկ իր ըսածներուն համառօտութիւնը:

«Կը փափաքեմ որ մատաղասի անձինք քաջ գիտնան թէ աշխարհ ո՛րչափ օգտակար բաներու կը սպասէ, եւ որ սորվին անոնց սպասել: Դարուս նման յառաջդիմական դարու մը մէջ ամենէն յաջող գործողներն անոնք են որ նոր եւ լաւագոյն կերպեր կը գտնեն: Խրախուսեցէք մատաղատի անձի մը հանճարին մէն մի նշանը: Ըսէք տղի մը թէ խորհելու եւ գործադրելու սեւէ տաղանդ աշխարհիս օրհնութիւն պիտի ըլլայ, թէպէտ պատճառ չըլլայ ալ իր հարստանալուն: Յաջողակ խորհուրդը գանձ է ամէն տեղ: Աստուածատուր պարգեւ է: Սոյնպէս է ուղեղը որ կը յղանայ զայն: Ըսէք անոր այդ բանը»:

«Ըսէք անոր որ թողու գրգռիչ ըմպելիները եւ ծխախոտը, այն ատեն պիտի ազատէ իր ուղեղը: Ես ոչ զոք կը մեղադրեմ բայց ինքզինքս, որ անփոյթ գտնուեցայ այս մասին երբ դեռատի էի, թէպէտ զարմանալի կը թուի որ ոչ ոք երբեք խրատ մը տուաւ ինձի»:

«Տասնըինը տարեկան հասակիս մէջ յաջողութեան պողոտային վրայ կը գտնուէի, եւ վառվռուն հանճարի տէր էի. բայց ընկերներու ծանօթացայ, եւ խմեցի, խմեցի, մինչեւ որ խմուեքը ունակութիւն եղաւ ինձի: Այդ անիծեալ սովորութիւնը երբեք չթողեցի վրայէս մինչեւ որ կործանեցան կարողութիւններս: Նայեցէք, խմուեքը ինչ աւերակութիւն բերած է վրաս: Այլ ուչ է հիմա: Ձեմ կարող միտքս կէտի մը վրայ ամփոփել, եւ ձեռքս չկրնար կատարեալ գծագրութիւն մը ընել»:

Դժբաղդ մարդը անկէ առաջ երբեք այդպիսի ազատ խոստովանութիւն մը ըրած չէր: Թերեւս այլ եւս երբեք չլսուի իրմէ բան մը: Կեանքը, ինչպէս կ'երեւի անոր յուսահատական կերպերէն, ողորմելիին համար այլ եւս չէր արժեր ապրիլ: Շատ ընթերցասէր էր, եւ մատաղատի անձանց բարեկալութեան անձկացող: Անոր յորդորական վերջին խօսքերը կ'արժէ արձանագրել: Եւ մէն մի այսպիսի օրինակ անգամ մըն ալ երիտասարդներուն կը կրկնէ սա յորդորը. «Ձեր կարողութիւնները աստուածատուր պարգեւներ են: Յաղթեցէք փորձութեան, եւ ամբողջ պահեցէք զանոնք»:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ ԻՆՉ ԸՐԱԾ Է ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ

ԵՆՅ Համալսարանի ուսուցիչներէն Փրոֆ. Պրիւրբի մօտերս «Արեւմտեան Մասաչուսեցի կենաց Ընկերակցութիւն» կոչուած կաճառին առջեւ, առողջապահական միջոցներու կիրառութեան արդիւնքներուն վրայ խօսած ուղերձը գրեթէ եղակաւ կը հանդիսանայ համառօտութեան եւ ուժգնութեան կողմանէ: Յաճախ վիճաբանութեան առարկայ եղած է բայց երբեք գոհացուցիչ պատասխան ընդունած չէ սա խնդիրը թէ արդեօք մարդկային կեանքին սեւէ իրական

չափ մը եղած է հիւանդութեանց ընդհանուր ձեւերու դէմ մաքրանքէ՝ հասարակ բժշկական մեթոտներով, կամ, մինչ հիւանդութեան մը մէկ ձեւը կը ջնջուի, ա՛րդեօք նոյն հիւանդութեան ուրիշ մէկ ձեւը չըզարգանար: Այսու ամենայնիւ առողջարանութեան գալով առարկութիւններ չեն կրնար յարուցուիլ: Չեռք բերուած շահը անվիճելի է եւ ամբաւ: Մանկութենէ մինչեւ ծերութիւն անցած կեանքի միջոցը թերեւս երկընցած չըլլայ, բայց ճամբան միացողներուն, այսինքն ծերութեան չհասած մեռնողներուն, թիւը այսօր չէ այնքան որքան էր հարիւր տարի առաջ: Հետեւեալ զարմանալի տեղեկութիւնները քաղուած են Փրոֆ. Պրիւլերի յիշեալ ուղեբնէն.

Ոչ ոք կը տարակուսի թէ մարդկային կեանքը գիտութեանց ընձեռած միջոցներու շնորհիւ երկնցած է վերջին յիսուս տարիներու մէջ: Թէ ի՞նչպէս եղաւ այս բանը, յոյժ շահեկան գլուխ մը կը կազմէ մեր քաղաքակրթութեան պատմութեան մէջ, Բայց լոկ պատմութիւն չէ այն: Թէ այս հաշիւը չափաբերապէս առ հարիւր ինչի՛ կը յանգի տարիներու ընթացքին մէջ, անպատասխանելի հարցում է: Հաշիւը չենք կրնար երբեք ցուցնել թուանշաններով: Մինչեւ անգամ եթէ պատրաստէինք կեանքի այդ միջոցին պատկանեալ վիճակագրութիւնները, մարդիկ համակարծիք պիտի չըլլային այս խնդրին վերաբերեալ քանի՛ մը տարրերու յարաբերական արժէքին նկատմամբ: Առանց գիտութեան օժանդակութիւններուն մեր մեծ քաղաքները գոյութիւն պիտի չունենային: անոնք չէին կրնար գոյ ըլլալ: «Գալով» այն հարցման թէ ի՞նչ տեղի պիտի ունենար ցայնժամ, պատասխանն այնքան անստոյգ է որքան պատասխանը սա հարցմանց թէ «Եւրոպայի վիճակը ի՞նչ պիտի ըլլար հիմա եթէ Նափոլէոն երբեք աշխարհակալութեան ձեռնարկած չըլլար»: «Եթէ Գոլումպոս Ամերիկան գտած չըլլար, ո՞վ պիտի գտնէր»: Ինչ որ կարող ենք ըսել՝ սա է թէ գիտութիւնը այնքան փոփոխութիւններ գործած է որ մեր այսօրուան քաղաքակրթութիւնը շատ մը աւելի յառաջ անցած է քան զոր պիտի ըլլար առանց գիտութեան. եւ մարդկային կեանքի երկարացումը գիտութեան այժմու քաղաքակրթութեան հետ ունեցած յարաբերութիւններուն մէկ ձեւն է միայն: Ունեցած ենք հին եգիպտական եւ Յունական եւ Հռոմէական քաղաքակրթութիւններ, որոնք կուսակալութիւններու թիւն էին, եւ վերջերք Քրիստոնէական քաղաքակրթութիւն, եւ ամէնն ալ անզօր եղան գործնականի վերածուելու մասին: Ժամանակ ժամանակ զայրացած համաճարակ հիւանդութիւններու եւ լաւագոյն տարիներու մէջ ամենէն շատ պատահած մահերու մէջտեղ Եւրոպայի բնակիչներուն թիւը, առ հասարակ, հաւանօրէն հազիւ երբեք անցաւ 1,000 կամ 1,200 տարիներու միջոցին: Ներկայ դարու սկիզբը չէր գտնուեր Քրիստոնէայ երկրներու մէջ մէկ միլիոն բնակիչ ունեցող միակ քաղաք մը: Փարիզ 1800ին միայն 548,000 բնակիչ ունէր: Լոնտոն իր արուարձաններով 1801ին 864,845 բնակիչ: Անգլիական միւս մեծ քաղաքները 100,000է պակաս բնակիչ ունէին: Այն ժամանակները մեծ քաղաքներ չէին կրնար տեւական վիճակ ունենալ, Նախ այն պատճառաւ որ ժողովրդին անկարելի էր կերակրուիլ: Այն ատենները ժողովրդին մեծ մասին ուտեստը հարկ էր բերել մինչեւ 20

մղոն հեռաւորութիւններէ: Գիտութիւնը հիմա կարելի ըրած է ուտեստ փոխադրել երկրագունտի կէս շրջապատին չափ հեռաւոր տեղերէ, նաեւ ուտեստները պահպանելու նոր մեթոտներ գտած է: Քաղաքներուն բնակիչները իրենք իրենց մնալով չէին կրնար պահել իրենց թիւը: Մարդիկ կը մեռնէին կ'երթային. մահերուն համեմատութիւնը շարունակ բարձր էր, եւ ժամանակ ժամանակ համաճարակներու ալ զոհ կ'երթային: Մինչեւ անգամ այնպիսի տեղերու մէջ ուր կոյուղիներ կը գտնուէին, անոնք աղտեղութիւններուն ջրային մասը ծծելու կը ծառայէին քան թէ աղտեղութիւնները անել տանելու: Այժմ քաղաքները գրեթէ զիւղերու չափ մաքուր եւ առողջարար վիճակի մէջ կը դրուին: Ուրիշ պատճառ մը թէ ինչո՞ւ այն ժամանակները այժմու իմաստով մեծ քաղաքներ չէին կրնար գոյութիւն ունենալ, պարզապէս անեւտրական է: Այս կէտին վրայ կը խօսիմ անոր համար որ քաղաքակիրթ երկիրներու քաղաքներուն բնակիչները հետզհետէ կ'աճին: Քաղաքներու մէջ մարդկային կեանքը շատ երկարած է հիմա: Իրաւ, երկար ժամանակէ ի վեր ապացուցուած է որ մահերուն համեմատութիւնը կ'աճի որքան աճի բնակիչներուն խտութիւնը: Եւ տակաւին ճշմարիտ է այս. բայց առողջարանական գիտութիւնը մեծապէս պակսեցուցած է այդ համեմատութիւնը:

Առողջարանական գիտութիւնը կամաց աճած է, բայց առատ պտղաբերած է: Երկու հարիւր տարի առաջ էր որ Հոլանտացի գիտուն մը գտաւ գարեջուրի փրփուրին մէջ խցիկները, բայց խցիկներուն գործնական նշանակութիւնը եւ պաշտօնը չհասկըցուցաւ մինչեւ որ չանցաւ հարիւր յիսուս տարի: 1837ին տեսնուեցաւ որ գարեջուրի փրփուրի խցիկներուն մէջ կենդանի գործարանաւորներ կային որոնք կը բաղմապատուէին հեղանիւթին մէջ ուր կը սնանէին եւ կ'աճէին: Խմորացման պատճառն այս էր: Բնալոյժք տարիներով կը վիճարանէին թէ արդեօք այդ մանրածինները այս խմորացման պատճառն են թէ արդիւնքը: Առաջին վարկածը հիմա լիովին հաստատուած է: Յետոյ ուրիշ վիճարանութիւն մը ծագեցաւ թէ արդեօք կեանք կրնայ ծագում առնել փտած կենդանական եւ բուսական նիւթերու մէջ, բայց յետոյ վերջնականապէս ապացուցուեցաւ թէ ծագում կ'առնէ իրօք:

Այս վարկածը այժմու հակաբնութիւն գործողութիւններուն հիմը կը կազմէ. եւ այդ ժամանակէն ամէն տեսակ ախտեր եւ հիւանդութիւններ սկսան ուսումնասիրուիլ նոր լուսով եւ դարմանման հիմնապէս տարբեր մեթոտով: 1849ին եւ 1850ին Գաղղիացի գիտունները ցուցին թէ քաղցկեղէ մեռնող անասուններուն արիւնը մանր մասնիկներ կը պարունակէր. եւ տասը տարի ետքը տեսնուեցաւ որ այս մասնիկները երբ կը մուծուէին ապրող գործարանաւորներու մէջ, այդ ախտերը յառաջ կը բերէին: 1870ին ապացուցուեցաւ թէ փտումը, խմորացման նման, մանրածիններու արդիւնք էր: Նոյն տարուան մէջ ընդհատական տենդի, Եւրոպական ցամաքին ամենէն վտանգաւոր ախտին, մանրածին գտնուեցաւ, եւ յաջորդ տասը տարիներուն մէջ շատ մը աւելի հետախուզութիւններ կատարուեցան նոյն խնդրին նկատմամբ:

Բորոտութեան մանրածին գտնուեցաւ

1879ին, ժամատանդինը՝ 1880ին, հիւճախտինը՝ 1882ին եւ հնտախտինը՝ 1884ին: Վերջին գիւտը ամենէն մեծ գիւտն էր, եւ էր արդիւնք գիտնականներու զիւցադնական այն ջանքերուն, գիտնականներուն՝ որոնք Եգիպտոս գացին յիշեալ ախտը քննելու համար մինչ հոն կը ճարակէր 1883ին: Բայց վարկածին ստոյգ ըլլալը ընդհանրութեան չընդունուեցաւ մինչեւ 1890: Այժմ մենք գիտենք ախտին պատճառը, եւ հիմա չկրնար արդարանալ այդ համաճարակին մեր քաղաքներէն ուռէ մէկին մէջ ծաւալումը: Երբ քանի մը տարի առաջ հնտախտ կար Համպուրի մէջ, Անգլիա իր առեւտրական շահերուն այնպէս ամբաւ կարեւորութիւն կ'ընծայէր որ մերժեց իր նաւահանգիստներուն մէջ մաքրանոցներ հաստատել այդ ախտին դէմ: Հարիւրներով հնտախտաւորներ մտան Անգլիա, բայց ախտին վրայ այնպէս լիակատար ծանօթութիւն կար որ ուր որ երեւցաւ՝ մարուեցաւ իսկոյն, եւ համաճարակի կերպարանք չառաւ: Երբեք կարելի չէ ըսել թէ մարդկային կեանքը միջին հաշուով մինչեւ որքան երկարած է լաւագոյն ուտեստի, մանաւանդ առողջապահութեան զարգացման եւ հիւանդութեանց գիտնականօրէն դարմանման շնորհիւ: Բայց հիմա ստոյգ է թէ հիւանդութիւններուն պատճառն են բաւական աղէկ հասկցուած պատճառներու գործողութիւնները: Քաղաքներ վերահասու եղած են թէ այլեւս ներքի չէ առողջապահութեան զանցառութիւնը. եւ անա միայն այս զարգացումները մարդկային կեանքին գործելու ժամանակամիջոցին երկարումը կը նշանակեն:

ԿՈՒՒՆԵԱՅԻ ԹՁՈՒԿՆԵՐԸ

Սայժա կը դրէ թէ Ամերիկացի վաճառական ճանապարհորդ մը մօտերս կուրնէյի մէջ հանդիպեր է զիւղերու, որոնց մէջ մանր մարդիկ կը բնակին իբր չորսուկէս ոտնաչափ միջին բարձրութեամբ: Հում պղիթ, երբ Հարաւային Ամերիկայի մէջ կը գտնուէր շատ տարիներ առաջ, լսած էր այդ կողմերը բնակող թղուկներու վրայ պատմութիւններ, բայց զանոնք տեսած չէր անձամբ, եւ կը թուի թէ անոնց վրայ պատմուածներուն քիչ հաւատ կ'ընծայէր: Կը յիշուի թէ Սթէյնլի իր Արիզոնական վերջին ուղեւորութեան մէջ թղուկներու հասարակութիւններ գտաւ, որոնց գոյութեան վրայ առաջուց պատմութիւններ կը լսուէին բայց առ հասարակ տարակոյս կը ցուցուէր:

ԻՍԿԱԿԱՆ ԳԱՏԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Մօտերս Ուաշինկթընցի Փրոֆ. Իվեր կէյթս յետին աստիճան պարզ կերպով յառաջ բերաւ բացարձակ դատարկութիւն, ինչպէս կը թուի: Առաւ քիմիական փորձերու ապակեայ եւ մէկ ծայրը դոց խողովակ մը, այնպիսի ապակիէ շինուած՝ որ միայն շատ սաստիկ տաքութիւնով կը հալի: Խողովակին մէջ լցաւ հալած ուրիշ տեսակ ապակի որ բաղադրապէս աւելի մեղմ տաքութիւնով կը հալի: Այս վերջինը պաղելէն ետքը հաստատուն մարմին մը ձեւացաւ որ կատարելապէս կը լեցնէր խողովակը: Ե՞ծող օդանան մը կցեց խողովակին բաց ծայրին, յետոյ տաքութիւն գործածեց մինչեւ որ ներսը գտնուած աւելի կակուղ ապակին նորէն հալեցաւ: Յաջորդ քայլն եղաւ դուրս քաշել հալած ապակին օդանանին միջոցաւ, խողովակին բաց ծայրը կատարելա-

պէս խցելու բաւական մաս մը թողլով, եւ յետոյ նորէն պաղելու թողուց: Որովհետեւ ոչ չէր կրնար մտնել հալած ապակիին դուրս հանուելէն յառաջ եկած դատարկ միջոցին մէջ, կը համարուի թէ կատարեալ դատարկութիւն կը գտնուի հոն:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ԵՆՆԻՃԷ

Գիւղիս բնակչաց ծագման վերաբերեալ մասնաւոր տեղեկութիւն չկայ: Սակայն, նկատելով աղաւաղեալ եւ այլակերպ նշանակութեամբ առնուած բառերը զորս տեղացիք կը գործածեն իրենց լեզուի մէջ, ապահով է ըսել թէ Եննիճէ տարբեր գաւառներու գիւղերէ հաւաքեալ գաղթականութիւն մ'է:

Ակնարկուած բառերէն քանի մը օրինակներ դնենք հոս. Զոճիկութիւն (խարդախութիւն), ճորալ (հայհոյել), քարս (անոյշ), ցընած (ծնած), տայի է (աղէկ է), ուղորդ (ճամբարիտ), էն սող (կարելի է), փոշի (մոխիր), տատեղ (թարմ պղպեղ), տեղմեւոր (մինչեւ որ), հըլի (ասիկա), մնէց (ինծմէ), պահ մը կայ (քիչ առաջ), թռիլ (ոստնուլ), վաղնէքին, վաղնիկու (առաւօտուն), վաղնէն (կանուխէն), սա վաղնեքին (սա առաւօտ), լոյնալ (մարմնով լուացուել), ջըլել-ջըլել (թըլել), կողել (կտրել): Էական բային եւ զակի երրորդ զէմքէն առաջ է աւելցունելով իրմէ առջի բառին հետ կը կցեն ու մեղմ եղանակով կ'արտասանեն. Օր. վարժապետիւնէ, մէջիւնէ, պարտէզիւնէ, տունիէ, փոխանակ վարժապետն է, տունն է եւն. ըսելու: Նաեւ կարգ մը բայերու ապահին կը կրճատեն ու խորթութեամբ կ'արտասանեն պըթաւս (պիտի երթաւս), պըստիս (պիտինըստիս), պըսես (պիտի ըսես) եւն. Այսու հանդերձ Եննիճէի լեզուն Պրուսայի գաւառին մէջ հայախոս գիւղերու առաջիններէն մին կրնայ նկատուիլ: Գիւղին հիմնարկուք իրենց բնակութիւնը նախապէս հաստատած են գիւղէն կէս ժամ հեռաւորութեամբ դէպ հարաւ բլրակի մը վրայ, սակայն թուրք զրացիներու թելադրութեամբ վերահաստատուել են այժմու վայրը: Ուստի թուրք զրացիք ուրիշ գեղացիներէ որոշելու համար կոչած են զանոնք Եննիճէի խաւար օլաւար (վերահաստատուողներ), որ ապա կրճատուելով եղեր է «Եննիճէ»:

Կը գտնուի Պրուսայէն վեց ժամ հեռաւորութեամբ Ողիմպոսի լեռան արեւելեան հարաւային ծայրը՝ երկու բլրակներու հարթ կողերուն եւ բլրակներն իրարմէ բաժնող առուակի մը երկու եզերքներուն վրայ: 1,200 տուններէ կը բաղկանայ. Տեսարանը ճոխ են եւ վսեմ: Գիւղին թիկունքը բլրակներ կը բարձրանան ու բլրակներու ետեւէն ձիւնապատ վեհ Ողիմպոսը, որոյ երկու թեւերէն մին հիւսիս եւ միւսն հարաւ կը տարածուի, եւ բլրակներու մահիկաձեւ այս շղթան իր մէջ կը պարփակէ «Լինէկիւլ» զաշտը, որ թէեւ սահմանափակ է, սակայն ունի բնութեան մէկ սքանչելի տեսարանը:

Առուակը, որ Ողիմպոսի կողերէն ապահով է մը դուրս կը պոթկայ, շագանակեմիներէ, կեռասնիներէ ու սալորենիներէ կազմեալ ստուերախիտ անտառակներն ճեղքելով նախ առատութեամբ կը բաշխէ գիւղացւոյն բաղմամբիւ աղբիւրներու զովարար ջուրն, ապա գիւղէն դուրս դաշտն անցնելով կ'ոռոգէ թթենիներն, ձմերուկներու, վարունգներու եւ արարեղներու պարտէզներն

ու կ'արգասաւորէ զանոնք: Գիւղացիք գարնան ու ամրան եղանակներուն մէջ կը դիմեն հոն, «Էրէ-պաշէն», պտղալի ծառոց հովանուոյն տակ ման գալու: Հոն կը ծծեն մաքուր օդն ու կը խմեն զովարար ջուրն, կ'երգեն, կը խայտան ու կը բերկրին, իրենց բարբառով ըսենք՝ Եաշաշէ կ'ըլլան, Եննիճէի կլիման աշնան ու ձմրան վերջերը քիչ մը խոնաւոտ կ'ըլլայ, սակայն մնացեալ ժամանակներուն մէջ յոյժ առողջարար է: Եննիճէցիին ժամանակաւ ունեցած է թէեւ ոչ այնչափ փառաւոր, այլ բարեկեցիկ վիճակ մը. բայց այժմ մէկէ աւելի անձ չի գտնուիր որ ի պատրաստի 100 ոսկի դրամ ունենայ: Նոյնքան դժուար է գտնել նաեւ աւելի քան քսան տուն որք բարեկեցիկ վիճակ մ'ունենան: Իսկ մնացեալներն ընդհանրապէս պարտուց տակ ճնշուած են, թէեւ զարմանալի է ըսել որ իրենց վիճակէն գոհ են: Եւ քանի որ արեւելութեան վատ ախտն ալ օր քան օր կը տարածի ու կ'ընդհանրանայ, տարակոյս չկայ որ Եննիճէցւոյն թէ՛ նիւթական թէ՛ բարոյական վիճակն ալ նոյն համեմատութեամբ պիտի տկարանայ եւ վատթարանայ: Իբրեւ արդիւնք գինեմոլութեան, իւրաքանչիւր տարի մէկ երկու սպանութիւն կը գործուի, բացի մանր մուկեր ոճիրներէն որ շաբաթը անգամ մը կամ ամիսը երկու երեք անգամներ կը պատահին: Գիւղին մէջ ամենէն բարեկեցիկ ու ազդեցիկ մասը Բողդակաշէ կը կազմեն. սակայն ցաւալի է ըսել որ ասոնց մէջ ալ մտած է այդ ստորնացուցիչ միջոցը: Եկեղեցւոյ անդամը ոմանք «Չափաւոր խմելու մեղք չէ» կ'ըսեն, ու կը խմեն. իսկ ոչ-անդամք՝ «Առիթէն օգուտ» քաղելով կը խմեն մինչեւ որ լաւ մը արեւնան:

Եննիճէցւոյն զբաղումն է շերամատածութիւն եւ հողագործութիւն. վերջինը ոմանց համար անուանական է: Բազմաթիւ գիւղիս մեծութեան արհեստաւորք փոքր մաս մը կը կազմեն: Կայ 5 շերամագոյծ, 1 մետաքսի գործարան, 3 մանիֆաթուրածը՝ մին շրեայ, 3 դարբին, 2 պայտար, 2 համեմատգործ՝ մին թուրք, 10 կրպակ, 20 սրճարան որոց երկուքը բաղնիքով մը միասին եկեղեցւոյն կը պատկանին, 4 սափրիչ, 2 վարպետ հիւսն եւ ասոնց հետեւորդ իբր հիւս 30ի չափ գործաւոր, 1 անագող, 6 մսագործ, 1 նալընձի վարպետ, 1 ոստայնանկ: Իզական սեռը իբրեւ գործաւորուհի տարւոյն մեծագոյն մասը կ'անցունէ Պրուսայի եւ Ճէրասի (*) մետաքսի գործարաններուն մէջ, ուր կ'աշխատին անգուլ եւ անդադար կիներ՝ իրենց զաւակաց օրապահիլը հայթայթելու, իսկ աղջիկներ՝ իրենց ճէնձը (օժիտ) պատրաստելու միակ նպատակաւ: Այս պատճառաւ յիշեալ տեղեաց մէջ կը գտնուին 5-6 հարիւր կին եւ աղջիկ (մեծագոյն մասը աղջիկ): Ասոնք ժամանակաւ իբրեւ օրական կ'առնէին 6-8 դահ. իսկ այժմ 2½-4½ դահ.: Ծախքերնին իրենց կը վերաբերի: Արանց հագուստի տարազն է զէպէկ (կարճ շէլվար) հաւասարապէս. սակայն երիտասարդք բնականէն հաստ երեւնալու համար կարգ մը հին շորեր մէջըներնին փաթթելէ վերջ կարմիր գօտիով մ'ալ կը գօտեւորին:

Ունին հինգ քահանայ որոնք բացի մկրտաւորութեան եւ ննջեցեալի սովորական տուրքերէն իբրեւ «արտա-հար» իւրաքանչիւր տունէ կ'առնեն կէս քիլո ցորեն կամ եգիպտացորեն, բայց աս ալ շատ քիչ անգամ կը յա-

(*) Եննիճէէն կէս ժամ հեռաւորութեամբ հայ գիւղ մ'է 300 տուն բնակչոք:

ջողին գանձել: Ունին նաեւ վեց եօթը ուսուցիչներ, որոց մին իբրեւ տարեթոշակ կ'ընդունի 3,000 դահ., իսկ միւսներէն իւրաքանչիւրը 700-1,800 դահ.: Ունին քարաչէն եկեղեցի մը եւ փայտաչէն գեղեցիկ դպրոց մը, ուր կ'ուսանին 4-5 հարիւր երկսեռ աշակերտք: Բացի եկեղեցւոյ կալուածներու հասոյթէն՝ իբրեւ օգնութիւն հայ մանկուոյն դաստիարակութեան տեղական կառավարութիւնը խոզակի տասանորդի տուրքէն դպրոցին կը վճարէ 30 ոսկի չափ գումար մը: Այս գումարի նուազին ու աւելնալն տեղոյն հրապարակին վրայ ծախուած խոզակի քանակութեան կախում ունի:

Աւետարանականները քսան երեք տուն են եւ փոքր մաս մը կը կազմեն: Իբրեւ հոգեւոր տուրք տարին կը վճարեն 25 օսմ. ոսկի. իսկ դպրոցի համար աշակերտք կը վճարեն 12-14 օսմ. ոսկի: Ասոնք եւս, շնորհիւ վեհ. Կայսեր, զրամական օգնութիւն կ'ընդունին 5-6 օսմ. ոսկի բացի Պարթի օգնութեանէն որ կը վճարուի գաւառիս միսիոնար Մր. Պրուսիին ձեռամբ: Աւետարանականք ալ ունին ուսուցիչ մը, որուն իբրեւ տարեթոշակ կը վճարեն 18 օսմ. ոսկի: Ունին յոյժ վայելուչ եւ առողջարար դիրքի մը վրայ հաստատուած փառաչէն եկեղեցի մը, որոյ ստորին յարկը յատկացուած է դպրոցի գործածութեան մինչեւ ցնոր տնօրինութիւն: Այս նուիրական գեղեցիկ յարկին տակ անցուցի գրեթէ տարի մը շրջապատեալ 33-38 երկսեռ պատանիներէ ու մանկտիներէ:

Գընճըլար Ա. Ե. ԳՈՂԱՆՍԵ

ՇՐԴԵՆ Ի ԳԸՆՃԸԼԱՐ

Գեկտ. 10 հինգաբլթի լուսնալու գիշերը, Գընճըլարի մէջ ժամը 6ը քառորդ անցած հրդեհ ծագելով տեւեց մինչեւ ժամը 10½: 4 տուն բոլորովին այրեցան եւ երեք չորս տուն թէեւ ոչ բոլորովին՝ սակայն անբնականի դարձան: Գիւղացիք որք փութացեր էին հրդեհավայրը՝ մեծ ճարպիկութիւն ցոյց տուին կրակին ընթացքը կասեցունելու: Կեանքի կորուստ չկայ. սակայն գոյքերու եւ տուներու վնասը 3-400 ոսկույ գումարի մը կը հասնի: Ծնորհակալ ենք թէ մահմետական եւ թէ ոչ-մահմետական գիւղացիներէն, որոնք հակառակ օդին գէշութեան եւ ճամբաներու անկանոնութեան փութացեր էին յօգնութիւն մինչեւ 1 ժամ հեռաւորութենէ հասնելով:

Գընճըլար * * *

Իւսկիւտարի Աւետ. Ժողովրդեան քարոզիչ Պատ. Կարապետ Գաբրիէլեան, որ երկու երեք ամիսէ ի վեր սաստիկ կը տառապէր ստրի հիւանդութեամբ, անցեալ ուրբաթ գիշեր իր հանգիստը մտաւ: Կրակի թաղման պաշտօնը տեղի ունեցաւ 3Երիգիւղի Աւետ. գերեզմանատան մէջ բարեկամներու ընտիր խումբի մը ներկայութեամբ: Հանգուցեցւոյն վրայ կը յուսանք գրել Ա-Երեմիէի յառաջիկայ թուով:

Ա Չ Դ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՅՈՅՑ, 1897

Դ. տարի: Բացի բուն Օրացոյցէն կը պարունակէ բարոյական առածներ, զուարճալիքներ, գիտական եւ վիճակագրական տեղեկութիւններ, եւս, ի մասնաւորի նախորդ տարւոյ տարեցոյցին մէջ հրատարակուած Ա. Փանոսեան էֆ.ի «Օգոստի նամակին» պատասխանը, կեդրոնատեղին է Նշան Պէրպէրեան էֆ.ի տպարանը, 61, Էսկի Զապթիյէ ճատէսի: Կը գտնուի նաեւ բոլոր հայ գրավածառներու քով: Դին 6 դահ.:

ՀԱՆԴԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գեղտ. 21 ըստ Յուն, եւ Յունվ. 2 ըստ Լատ. 1897

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յրանսական խորհրդարանի աշխատանքներն ստանալով վերջացաւ զեկտ. 19ին, շաբաթ օր: Այդ վերջին օրը Ընկերվարական եւ ընտրութեան մը առաջարկեց անմիջապէս քուէարկել հետեւեալ որոշումը. «Ժողովը Հանրապետութեան կառավարութեան հրաւեր կը կարգայ համազգային խորհուրդի մը հաստատման ձեռնարկել՝ տակաւ տակաւ յառաջ բերելու նպատակաւ ընդհանուր զէնքակէցութիւն մը այնպէս տնօրինուած որ, մինչեւ լիովին ի գլուխ հանուի, իւրաքանչիւր ազգի յատուկ զինուորական ոյժերը նոյն մասն» Ատենաբանն ընդարձակօրէն ցոյց տուաւ պատերազմի արհաւիրքները եւ մեծածախ սպառազինութիւններու պատճառաւ ժողովրդին վրայ ծանրացող անտանելի բեռը, եւ խնդրեց որ կառավարութիւնն յայտնէ թէ ինչ որ Յրանսա կը յուսայ Ռուսիոյ զինակցութեանն օգնութիւն մը չէ ի նպատակ վրէժխնդրական պատերազմի մը, այլ՝ խաղաղութեան պահպանումը: Ուրիշ երեսփոխան մը այսպիսի որոշման մը ստիպողական չըլլալն հաստատել ուղեւոր՝ սպայէս ըսաւ. «Յայտնի է թէ այս առաջարկին հեղինակները մոռցած են որ սահմանագիծին անդի ի կողմը երեք հզօր պետութիւններ կան սպառազինուած, որ երկրին անկախութեան կը սպառնան: Վտանգաւոր ձեռնարկ է քաջալերել սա կարծիքը թէ անոնք զէնքակէցութեան կը միտին: Առաջարկին հեղինակները մոռցած են նաեւ թէ մայր երկրէն բնի անջատուած երկու գաւառները քանակեց տարիէ ի վեր լաւագոյն օրերու կը յուսան եւ անխուսափելի հատուցման ժամուն կը սպասեն» 35ի դէմ 490 քուէով մերժուեցաւ այսպիսի որոշման մը հարկաւորութիւնը:

—Միացեալ Նահանգներու եւ Սպանիոյ փոխադարձ յարաբերութիւնները սովորականէն նուազ անձկութիւն կը պատճառեն: Ամերիկեան Արտաքին գործոց նախարար Մր. Օլնի տեսակցութեան մը առթիւ ըսաւ թէ Բուլղարիան օրինաւոր պատերազմիկ ճանչնալու կամ անոնց անկախութիւնն ընդունելու նկատմամբ Ազգային Ժողովին կողմէ արուած սեւէ որոշում «կրնայ վայելչապէս համարուիլ լոկ արտայայտութիւն մը այն նշանաւոր անձերու կարծիքին որոնք անոր ի նպատակ կը քուէարկեն» եւ թէ այդպիսի սեւէ որոշում «պարզիւն է իբրեւ օրէնք, եւ կարեւոր է միայն իբրեւ մեծ կշիռ ունեցող խրատ մը, որ Գործադիր իշխանութեան կը տրուի կամաւորապէս նկատմամբ կերպին, որով այդ իշխանութիւնը պիտի գործադրէ իր սահմանադրական պաշտօնը» Այսպիսի խօսքեր կը միտին հանդարտեցնել Սպանիական իշխանութիւնները, եւ հաւանօրէն այդ նպատակաւ ըսուեցան, որպէս զի յանկարծ թշնամութիւն մը չծագէր երկու տէրութիւններուն միջեւ: Միւս կողմէ Մր. Քէմըրընի առաջարկներուն նշանաւոր պաշտպաններէն մին Ծերակոյտին մէջ ըսաւ. «Կ'ըսենք թէ Միացեալ Նահանգները, իբրեւ երկուքին ալ բարեկամ, միջնորդութիւն ընեն պատերազմին վերջ մը տալու համար: Սպանիա կարող է մերժել այդ առաջարկները, բայց պատերազմի պատճառ պիտի չըլլայ այդ» Ծերակոյտին մէջ Քէմըրընի առաջարկին եւ

Բուլղարի վերաբերեալ ամէն ուրիշ առաջարկի վիճարանութիւնը որոշուեցաւ սկսիլ Ծնունդի արձակուրդէն ետքը: Այս կը ցուցնէ թէ Ծերակոյտին անդամները այդ մասին հապճեպով գործելու դէմ են: Խորհրդարանական յիշեալ արձակուրդին միջոցին իրենց ընտրողներուն մէջտեղ պիտի գտնուին եւ պիտի տեսնեն թէ Բուլղարի հանդէպ համակրանքի զգացումներուն հետ մէկտեղ կայ նաեւ հապճեպով միջամտելու դէմ զօրաւոր զգացում մը: Ինչպէս Լոնտոնի Ամերիկեան նախկին դեսպան Մր. Ֆելքս ըսաւ ձառի մը մէջ որ ջերմապէս ծափահարուեցաւ, «Մենք խաղաղութիւն եւ անդորրութիւն կ'ուզենք: Մենք արտաքին պատերազմի բաղձացող չենք» Սպանիական վարչապետ Սինեոր Բանովաս չկարծեք որ Բուլղարի օրինաւոր պատերազմիկ իրաւունք ընծայուիլը կամ անոր անկախութեան ճանչցուիլը Միացեալ Նահանգներու հետ պատերազմի մը բռնուելու պատճառ ըլլայ: Կ'ըսէ թէ չկրնար հաւանիլ որ արտաքին ճնշման ներքեւ գործողի երեւոյթ առնէ ինք, այլ կացութեան սեւէ վճռական բարեօրումէ օգտուելով պիտի ձեռնարկէ բարենորոգում ի գործ դնել Բուլղարի մէջ, եւ արդէն իսկ այդ նպատակաւ պատրաստութիւն կը տեսնէ Փորթօ Ռիքոյի մէջ: Սպանիա դեռ չէ ընդունած Միացեալ Նահանգներու միջնորդութիւնը, բայց Մատրիտեան թղթակից մը կ'ըսէ թէ Սպանիացիները Միացեալ Նահանգներու հետ իրաւաբան ըլլալու գաղափարին հիմա նուազ պիտի ընդդիմանան, եթէ Ամերիկա թողու Բուլղար կղզւոյն անկախութեան գաղափարը: Կը հաստատէ նաեւ թէ Եւրոպական պետութիւններն Սպանիոյ խորհուրդ տուած են ինքնօրինութիւն չնորհել իր գաղթականութիւններուն, եւ Միացեալ Նահանգներու հետ համաձայնիլ Բուլղարի խաղաղացումը փութացնելու համար: Մատրիտի Ամերիկեան դեսպանը կ'ըսէ թէ, եթէ Սպանիական կառավարութիւնը Բուլղարիներուն չնորհէ տեղային վարչութեան գոհացուցիչ դրութիւն մը, ո՛չ անկախութիւն՝ որուն անյարմար են, եւ ապստամբները մերժեն ընդունիլ այդ չնորհը, այն ատեն կարելի է այնպիսի ճնշում մը ի գործ դնել անոնց վրայ որ ստիպուին համակերպիլ: Սպանիական կառավարութիւնն հարկ դատած է նախապէս զինուորական որոշ յաջողութիւն ձեռք բերել, եւ Զօր. Ուէյլըր Փինար տէլ Ռիօ Նահանգին մէջ իր գործողութիւններն յառաջ կը մղէ անձրեային եղանակին սկսելէն, այսինքն մարտ ամիսէն, առաջ այդ յաջողութիւնը ձեռք բերելու յուսով: Սակայն Թոյսը կը զեկուցանէ թէ Զօրավարն այդ նահանգին մէջ յետ մղուած է ապստամբներէն, եւ Մատրիտեան հեռագիր մը կը ծանուցանէ պարտութիւն մը, յորում 121 Սպանիացիներ սպաննուած են:

—Սերպիոյ Ալեքսանտր թագաւորը Նովաքովիչի նախարարութեան հրաժարականն ընդունեց եւ Վիէնայի Սերպիական դեսպան Մ. Սիմիչի յանձնեց նոր դահլիճը կազմելու գործը: Մ. Սիմիչ երկուշաբթի Վիէնայէ Պելկրատ եկաւ, եւ յաջողեցաւ նախարարութիւն մը կազմել: Ինք ստանձնած է Վարչապետի պաշտօնին հետ Արտաքին գործոց նախարարի պաշտօնը:

—Քեօնիէ Յայնսնի կ'ըսէ. «Հակառակ հրատարակուած ըրոյր հերքումներուն, Յրանքեւոտական զինակցութեան առթիւ տեսնուած խանդավառութիւնը թեթեւ չա-

փաւորութիւն մը ընդունած կը թուի Չարին ի Փարիզ այցելութեան առթիւ» Յօդուածագիրը կը կարծէ թէ Յրանսայի անհաճոյ է Ռուսիոյ դրամական ընթացիկ դրութիւնը բարեփոխելու ձեռնարկը, վասն զի ատով պիտի սպառի Մ. աը Վիթթէի ձեռամբ հաւաքուած ոսկւոյ անագին մթերքը, եւ թէ պատերազմի պահուն Ռուսիոյ գլխաւոր նեցուկը ոսկին է:

—Մր. Փեթրոպոլսի մէջ պաշտօնապէս կը ծանուցուի թէ Զարը վաւերացուցած է Ռուսեւչինական երկաթուղի մը շինել յանձն առնող ընկերութեան մը կանոնագիրը: Այդ ձեռնարկու ընկերութիւնը կը կոչուի Արեւելեան Չինական Երկաթուղւոյ Ընկերակցութիւն: Մանչուրիոյ մէջ պիտի շինէ եւ բանեցնէ երկաթուղի մը որ Ռուսական կառավարութեան կողմէ շինուած Սիպերիական Երկաթուղւոյն հետ պիտի կապակցի: Այս ձեռնարկը մեծապէս կը կարճեցնէ Վլադիվոսթոքի Ռուսական նաւահանգիստը երթալու ճամբան, բայց Չինական նաւահանգիստ մը չընծայեր Ռուսիոյ: Յոյս կայ որ Վլադիվոսթոք տանող զծին շինութիւնն աւարտի մինչեւ 1903: Գերմանական թերթեր կը կարծեն թէ այս պայմանագիրը զարմացում պիտի պատճառէ մանաւանդ Անգլիոյ մէջ, եւ շատ վնասակար պիտի ըլլայ Անգլիական շահերուն: Սթրասբուրգ, ընդունելով հանդերձ թէ «Չինական պետութեան մէջ Ռուսական ազդեցութիւնն իրականապէս սկսած է հաստատուիլ» կ'ըսէ, «Ոչինչ այնքան կը ծառայէ Գերմանական զիւանագիտութեան նպատակին որքան Անգլիա եւ Ռուսիա իրարու հետ գծեցնել Ծայրագոյն Արեւելքի մէջ» Ծինուելու երկաթուղին, կ'ըսէ, Չինու բազմամարդ կեդրոնին աւելի մօտ չէ քան ուրիշ մը զոր Անգլիական կառավարութիւնը պիտի շինէ Պիլմայի հիւսիսակողմէն մինչեւ Չինու հարաւակողմը, եւ կը յարէ. «Մեր վաճառականները եւ սեղանաւորական տուները պատճառ չունին ցաւելու որ Եւրոպական պետութիւն մը կը յաջողի քակել Չինական պահպանողականութեան պատուարը եւ անցնիլ: Ո՛ւր որ ուրիշներ կ'երթան, մենք ալ կ'երթանք անշուշտ»:

—Տր. Բիւմօ կը տեղեկագրէ Գերմանիոյ Յրանքֆորթ քաղաքի հիւանդանոցին մէջ կեղծմաշկի հիւանդութիւնը շիճաղեղով դարմանելուն արդիւնքը: 483 հիւանդներ դարմանուել են եւ մահերու թիւը հարիւրին 10½ եղեր է: Չհաշուելով այն հիւանդները որոնք մահամերձ վիճակի մէջ էին երբ հիւանդանոց բերուեցան, հարիւրին միայն 7 մեռեր են: Ծիճաղեղին զիւտէն առաջ 1889էն մինչեւ 1894 նոյն հիւանդութեամբ մեռնողներու համեմատութիւնը հարիւրին 32է մինչեւ 43 կ'ըլլար:

—Ռուսական Երեսփ. Ժողովին մէջ գահաձառին արուելու պատասխանին վերաբերեալ վիճարանութեան առթիւ Մ. Սթուրցա ըսաւ թէ Ռուսական մի միայն Ռուսիայէ աջակցութիւն ակնկալելու է: Արտաքին գործոց նախարար Մ. Սթոյսէսքօ պատասխանեց թէ Ռուսական զիւրքը կը պահանջէ բարեկամական յարաբերութիւն մշակել ըրոյր պետութիւններուն հետ: Կառավարութիւնն արդէն այդ ուղղութեան կը հետեւի պատուղներն ալ տեսնուեցան, ինչպէս գահաձառանգ իշխանին եւ իշխանուհոյն սիրալիր ընդունելութիւնն ի Մոսքուա, Յրանք Ենդէֆ կայսեր եւ Սերպիոյ Ալեքսանտր թագաւորին այցելութիւններն ի Պուլքէշ:

Յուրաքանչյուր հետ զիւանազորական յարաբերութիւններու վերսկսումը, եւ շնորհները զորս վեհ. Սուլթանը վերջերս ըրաւ Օսմ. պետութեան Գոցո-Վալաքներուն, նախարարին այս յայտարարութիւնները ծախարարութեամբ ընդունուեցան:

—Անգղիական եւ Ամերիկեան կառավարութիւնները համաձայնած են երկու պետութիւններու ապագայ վէճերը կարգադրելու համար իրաւարարութեան մնայուն ատենի մը հաստատման խնդրոյն նկատմամբ:

—Մր. կուտրիճ, երբեմն դատաւոր Հընդ-կաստանի, կ'ըսէ թէ կեդրոնական գաւառներուն մէջ օրը հազարաւորներ կը մեռնին չքաւորութենէ, եւ թէ կառավարութեան անհնար է սովին առջեւ առնել: Պոմպայէ հեռագրուեցաւ երկուշաբթի թէ նախորդ քանի մը օրերուն մէջ ժամտախտէ 177 հոգի մեռեր են:

—Երկուշաբթի Մատրիտէ հեռագրուեցաւ թէ Բուպայի խաղաղացման համար Միացեալ Նահանգաց միջնորդութեամբ ի մօտոյ կարգադրութիւն մը պիտի ըլլայ Սպանիոյ եւ Բուպայցիներուն միջեւ: Այս հեռագրաւորը պաշտօնական չէ, բայց անհաւանական չէ, վասն զի կ'ըսուի թէ Մաչէոյի մահուամբ վերցուած է իրաւախոհութեան գլխաւոր արգելքը: Բուպայցիներու հրամանատարը կոմէզ հիւանդացի է եւ չկրնար կոռուղներուն գլուխն անցնիլ:

—Հեռագիրը կը ծանուցանէ թէ Գերմանիոյ Արտաքին գործոց նախարար Պաուս ֆոն Մարշալ եւ Փրանսայի Արմատական երեւելի քաղաքագէտ Մ. Բլէմանսօ ծանր հիւանդ են:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ ուրբաթ Աշխարհի արարողութենէն ետեւ Ռուսական դեսպան Մ. Ճուվարա եւ յետոյ Ճափոնական բանակի սպաներէն Ջոր. Թրաօցի պատիւ ունեցան առանձինն վեհ. Սուլթանի ներկայանալու:

—Անատոլի նահանգներու կայս. ընդհանուր քննիչ Շաքիր փաշա Տիարպէքիրի մէջ յանձնախումբ մը կազմած է, որ գաւառին թախտաշրջիկ ցեղերէ բնակեալ մասերուն մէջ վաճառականութիւնը եւ ճարտարագործութիւնը յառաջ տանելու միջոցները պիտի ուսումնասիրէ:

—Երեքշաբթի մայրաքաղաքէս Տրապիզոն ուղեւորեցաւ մասնախումբ մը որ հարցաքննութեան մը պիտի ձեռնարկէ հոն:

—Երկուշաբթի Ռուսական դեսպանը, Ռուսահիոյ Ելեւմտական նախարարութեան խորհրդական Մ. Փրոթոփովիչիցոյի եւ Ռուսահիոյ մաքսատանց տնօրէն Մ. Ռատուլէսքոյի ընկերակցութեամբ Արտաքին գործոց նախարարին այցելութիւն տուաւ: Դեսպանին յիշեալ ընկերները Ռուսական կառավարութեան կողմէ պատուիրակ կարգուած են որ Թուրքիոյ եւ Ռուսահիոյ միջեւ կնքելի առեւտրական պայմանագրին բանակցութիւնները կատարեն:

—Գիւղախումբերու քանի մը կառավարիչներ աղերսագիր մատուցանելով խնդրեցին որ իրենք ալ, Միլիթիէի վարժարանէն շրջանաւարտ եղող իրենց ընկերակիցներուն նման, քննութիւն տալով գաւառակի կառավարչութեան պաշտօնի բարձրանան: Սակայն այդ աղերսը կայս. հրամանին անհամաձայն նկատուելով մերժուեցաւ:

—Համիտիյէ հեծելազորքերը որ մէկուկէս ամիս առաջ մայրաքաղաքս եկան՝ երկուշաբթի Մախսուէի վարչութեան շոգենաւորով իրենց տեղերն ուղեւորեցան: Շոգենաւորներէ առաջ գացին Երլազի պալատը եւ հանդիսապէս անցան կայս. Էջաթին առջեւէն, ուր կը գտնուէր վեհ. Սուլթանը: Ճաշ մը տրուեցաւ եւ շքադրամ բաշխուեցաւ սպաներուն եւ զինուորներուն, նաեւ մէջմէկ ամսական նուէրուեցաւ: Չորս շոգենաւորակացուեցաւ իրենց: Երեքը Տրապիզոն գացին եւ մէկը Աղեքսանդրիա:

—Ալումինումէ շքադրամներ պատրաստուած են եւ պիտի տրուին անոնց որ առնուազն երկու հազար դահ. տուած են զինուորական հաստատութիւններու ինքնապատ ձեռնարկուած ազգային հանգանակութեան: Սոյն նպատակաւ հաւաքուած նպաստներու համագումարը մինչեւ ուրբաթ 3,800,321 հասաւ:

—Մայրաքաղաքիս տպարանագետներուն պատուիրուեցաւ մինչեւ տասնեւհինգ օր Տպագրական տեսչութեան տեղեկագրել իրենց տառերուն եւ տպագրական այլ գործիքներուն քանակութիւնը եւ տեսակները, նաեւ զրկել իրենց այլեւայլ տեսակ տառերուն տպուած նմոյշները:

—Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը երկաթուղոյ այլեւայլ ընկերութիւններուն յատկացուած կայս. քննիչներուն նամակ զրկեց, եւ պատուիրեց որ տասն օրէն լիուրի տեղեկագրիներ հաղորդեն եւ ցուցնեն թէ յիշեալ ընկերութիւնները ո՞ր աստիճան կատարած են իրենց մենաշնորհին պայմանները:

—Երեքշաբթի Ռուսական, Փրանսական, Գերմանական, Անգլիական եւ Իտալական դեսպանները Աւստրիական դեսպանին այցելութիւն տուին:

—Ինչպէս յայտնի է երկրի մը ելեւմտական կացութիւնը բարեւոք վիճակի մէջ կարելի չէ պահել եթէ ճշգիւ չյարգուի ելեւմտացոյցը դուրս ունէ ծախք չընելու հիմնական կանոնը: Կայս. հրաման մը կը պատուիրէ որ մեծագոյն ուշադրութիւն ընծայուի այդ կանոնին: Ելեւմտացոյցը դուրս ծախք մը պիտի չըլլայ, ի բաց առեալ այն բացառիկ ստիպողութիւն ունեցող պարագաները, երբ անհնար է անհրաժեշտ ծախքներն ընել ելեւմտացոյցի մէջ նշանակուած գումարներով: Այդպիսի պարագաներու համար ծախքի մասնաւոր գումար մը պիտի բացուի: Դարձեալ, երբ պաշտօն մը թափուր մնայ այն պաշտօնատուներուն մէջ ուր պէտք եղածէն աւելի պաշտօնեաներ կան նոր պաշտօնեայ պիտի չկոչուի անոր համար, եւ այդ կերպով խնայուած թոշակները ելեւմտացոյցին հասոյթի կողմը պիտի անցուին: Հաշուակալութեանց զիւանդ պիտի հսկէ վերոյիշեալ սկզբունքներուն գործադրութեան: Հանրօգուտ շինութեանց նախորդ նախարար Թէվֆիգ փաշա նախագահ կարգուած է այդ զիւանդին: 1313 տարուոյ ելեւմտացոյցին մանրամասնութիւններն հրատարակուեցան: Տասնորդի տուրքին հարկերն 10էն 10 $\frac{1}{2}$ ի բարձրացմամբ 200,000 ոսկոյ հասոյթի առաւելութիւն մը կ'տակուի այդ հաշուէն: Ոչխարի տուրքի հաշուէն ալ 200,000 ոսկոյ առաւելութիւն մը կ'ազնակալուի ոչխարի տուրքը յառաջիկայ մարտէն սկսեալ 20 փարա աւելցնելով: Ասիական Թուրքիոյ հողագործները Բեֆէթի-ի տուրքէն զերծ պիտի կացուցուին, որով 342,

133 ոսկի պիտի պակսի հասոյթի այդ գումարէն: Սակայն կ'ազնակալուի որ այդ բացին տեղ 100,000 ոսկի գոյանայ մենաշնորհի տուրքին գանձմամբ, որուն պիտի ձեռնարկուի անմիջապէս երբ հարկաւոր արարողութիւններն աւարտին: Ելեւմտացոյցին մէջ մաքսատանց հասոյթը 160,000 ոսկի պակաս ենթադրուած է քան 1308, 1309 եւ 1310 տարիներու հասոյթներուն միջինը: Այդ երեք տարիներու հասոյթները այդ հաշուին իբրեւ հիմ բռնուած են: Արդէն իսկ պատուիրուած է ի գործ դնել ծախքերը զեղչելու տնօրինութիւնները, որոնց կարգէն է նաեւ պահեստի զօրաց արձակումը: Ելեւմտացոյցին մէջ հասոյթներու համագումարն է 18,511,323 ոսկի եւ ծախքերու համագումարը 18,429,411 ոսկի: Այսպէս հասոյթի առաւելութիւնը կ'ըլլայ 81,912 ոսկի:

—Կայս. կառավարութիւնը որոշած է քանի մը թեթեւ բարեփոխումներով ընդունիլ Անատոլի երկաթուղեաց ընկերութեան աղերսագրերը, որով արտօնութիւն խնդրուած էր Ատապազարի կայարանէն մինչեւ քաղաքը երկաթուղոյ մասնաւոր գիծ մը երկարել:

—Իզմիրի թերթ մը կ'ըսէ թէ Գերմանական Լանտերպանք եւ սեղանաւորական ուրիշ քանի մը հաստատութիւններ ձեռնարկած են սեղանաւորական նոր տուն մը հիմնել Իզմիրի մէջ:

—Պետական խորհրդոյ անդամ Ա. քիֆ էֆ., Ելեւմտական նախարարութեան յատուկ ժողովին ատենակալ Իպրահիմ էֆ., Պետական խորհրդոյ անդամ Բոնսթանթին Գարաթէոտորի էֆ. եւ Արտաքին գործոց նախարարութեան թարգմանչաց զիւանդ Տիրան պէյ պաշտօնէից ընտրութեան նորակազմ յանձնախումբին անդամ կարգուեցան:

—Անցեալ շաբթու հրատարակուած կայս. ներման շնորհին համաձայն, այս շաբթու ամէն օր Հայ բանտարկեալներ արձակուեցան հարկաւոր ձեւակերպութիւններու կատարմամբ: Արձակուածներու ամէն խումբ պատրիարքարան տարուելով Սուրբ Գիրքին վրայ հաւատարմութեան երզում ըրաւ, նաեւ երզումը ստորագրեց:

—Գնդապետ Լէոնթիէլ եւ Հապէշաստանի Մէնէլիք թագաւորին քարտուղարը մայրաքաղաքիս մէջ են քանի մը օրէ ի վեր եւ այցելեցին տեղւոյս շահեկան գլխաւոր վայրերը:

—Տիրքան էֆ. Տէր Ներսէսեան Հայոց պատրիարքարանի կողմէ անդամ ընտրուեցաւ Ոստիկանութեան պաշտօնատան մէջ կազմուած այն յանձնաժողովին, որուն պաշտօնն է մայրաքաղաքէս մեկնող Հայերուն գործերը կարգադրել:

ԳՐԱՄԱԿԱՆ			
Գեղտեմբեր 21/2, 1896			
Գոնտոլիտէ			22 24
Բուսէլի Երկաթուղի			103
Թահվիլսուք Օսմանիյէ			74
ԳՐԱՄԳ. Օսմ. ոսկէն 100է			
Մէֆթիյէ	108 15	Ռուսիոյ ըՆԸ	89 25
Մէթալիք	97 30	Նաբոլէան	87 15
Պէշիք	102 20	Գրեմից	54 7
Ալթըլըք	103 10	Անգլ. սոցի	110
Մանր արձաթ	103 15	Մանէթ թղթ.	8 58

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱԿԵ ՈՒ ՅԱՌԱ ՊՅՅԱԾԱՆ
Ֆիլեմենտոս Եղուչ, Ամերիկաց Խոն

ՕՐԱՑՈՅՑ 'ԱՒԵՏԱԲԵՐ'Ի

1897

ՏՈՒՐԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 1346-1347

ԱՐԱԲԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆ ԵՆԻՏԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆ

1314-1315 1312-1313

ԳԻՏԵԼԻՔ

ԻՆՔՆԱԿԱԼ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Վեշ. ՍՈՒՐԹԱՆ ԱՊՏ ԻՆԼ ՀԱՄԵՏ ԻՆԸ Բ. ԵՆԻՏԱԿ Ե (Շաբաթ 16, 1258, Սեպտ. 10/22) 1842 Ի ԳՐԱՆ ԵՎԱԿԱԼ (Օգոստ. 19/31) 1876

Table with 2 columns: 1314 տարեյ Շաբաթ ամիսը և 1315 տարեյ Մարտի ամիսը. Lists various months and their corresponding days.

Table with 2 columns: ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՈՒՍԱԿԱԼՔ. Lists names and their corresponding days.

Table with 2 columns: ԱՐՏՈՆԵԱԼ ՆԱՀԱՆՔ, ՍԱՏՈՒԿ ԿՈՍՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ, ՀԱՅԱՍՏԱԿԱՆ ՄԱՐԿԱԿԱՆ ԿԱՆՈՒՄ, ԿԱՌՈՂԱԿՈՍՈՒՆ ԵՒ ԵԿԵՆԵՑԻՑ. Lists various names and their corresponding days.

Table with 2 columns: ԱՆՔԱՆՈՐ, ԱՆՔՆՈՐ, ԱՆՔՆՈՐ, ԱՆՔՆՈՐ. Lists names and their corresponding days.

Large table with 12 columns: ՅՈՒՆՈՒՍ, ՓԵՏՐՈՒՍ, ՄԱՐՏ, ԱՊՐԷԼ, ՄԱՅԻՍ, ՅՈՒՆԻՍ. Each column has sub-columns for months and days.

Table with 12 columns: ՅՈՒՆԻՍ, ՕԳՈՍՏՈՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՄԲԵՐ, ԴԵԿՏԵՄԲԵՐ. Each column has sub-columns for months and days.

Table with 2 columns: ՏՈՒՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ՅԻՇԱՍԱԿԱԼԻ ԱՌՈՒՐԻՔ, ՀԱՅՈՑ ԱՍԻՒՔ, ՅՈՒՆԱԿԱՆ ԱՍԻՒՔ ԵՒ ՆՈՒԱԿԱՆ ԹՈՒՐՈՒՆԻՔ. Lists names and their corresponding days.

Օմանիան Պետության թղթատարները ջանքեր և ծովյն փոխադրում և մինչև 15 կրամ ծանրութիւն ունեցող իւրաքանչիւր նամակի համար մէկ զաճ. կ'առնուի, 15է մինչև 30 կրամ ծանրութիւն ունեցող իւրաքանչիւր նամակի համար երկու զաճ. և սպալես իւրաքանչիւր 15 կրամ կամ պակաս ծանրութեան յաւելան համար մէկ զաճ. և կ'առնուի:

Գարնայն իւրաքանչիւր արձանագրեալ (Բեճկ-տրեճ) նամակն սովորական նամակի զինն զատ մէկ զաճ. կ'առնուի արձանագրութեան համար և 40 փարս ևս կ'ընց համար:

Երկրայն թղթատարով փոխադրում և մինչև 75 կրամ ծանրութիւն ունեցող լրագրի, զքրքի և տետրակի, նաև աշխարհացոյցի, կալուածագրի (Եճճէճ), պատկերի, կայսերական հրատարակի և փառաւանկանակն սովորներու համար 40 փարս կ'առնուի, և իւրաքանչիւր 75 կրամ ծանրութեան յաւելան համար 10 փարս ևս կ'առնուի:

Միջուկն թղթատարով փոխադրում և մինչև 250 կրամ ծանրութիւն ունեցող անսովոր նմաներու (Բեճկ-տրեճ) իւրաքանչիւր 75 կրամի համար 10 փարս կ'առնուի, իսկ եթէ այդ նմաներու ծանրութիւնը 250 կրամի ակնի ըլլայ, իւրաքանչիւր 50 կրամի համար կ'առնուի 20 փարս: Այլույն ցամաքայն թղթատարով փոխադրում և մինչև 250 կրամ ծանրութիւն ունեցող այդ տեսակ նմաներու իւրաքանչիւր 50 կրամի համար կ'առնուի 20 փարս, և եթէ անոնք ծանրութիւնը 250 կրամի ակնի ըլլայ, իւրաքանչիւր 50 կրամի համար կ'առնուի 20 փարս: Թղթատարին յանձնուած նմաներու ծանրութեանը 2,000 կրամի ակնի ըլլալու չէ:

ՀԵՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ ՄԻ ԵՆԻ ԿՈՍԱԿԱԿԱԼՈՒԹԵԱՆ, կամ երկու տարբեր կուսակալութիւններու հետազարկան երկու կայաններու միջև քաղաքում հեռագրի մը իւրաքանչիւր բառի զինն և 40 փարս:

ԱՐՁԻՔ ՕՍԱՐ ԴՐԱՄՈՑ Յայտնի է թէ գանազան ազգերու գրամներուն յարաբերական արժէքն անդադար փոփոխութիւն կը կրէ, սակայն ի ստորեւ գրուած ցուցակը կրնայ ընդհանուր զարդիւրք մը տալ այդ գրամներուն արժէքին նկատմամբ, որ ցուցնուած է օսմ: արժանք զաճակնամբ:

ԱՍՏՈՐԻՅ ԵՒ ԲՈՒՄԻՅ Այլ սովորական գրամներուն գրամն է թղթատար, որը արժէքը բաժանակն պակաս է այդ նպատակով արժէքն Թղթատարով փոխադրելու արժէքն է իւր Թիճ զաճ. և թղթատարով արժէքը իւր 12 զաճ.:

Հայերեն և Հայաստան թուրքերեն Ա-բ-բ-բ-բ և յունարար թուրքերեն Ա-բ-բ-բ-բ լրագրերը իւրաքանչիւր ամիսը 400 փարսով են յարմար: Թուրքերէնի և արաբերէնի լրագրերը իւրաքանչիւր ամիսը 400 փարսով են յարմար: Թուրքերէնի և արաբերէնի լրագրերը իւրաքանչիւր ամիսը 400 փարսով են յարմար:

The first of these is the fact that the
 population of the country has increased
 very rapidly since the year 1800. This
 increase has been the result of a
 number of causes, the most important
 of which are the following:

1. The discovery of gold in California
 in 1848, which led to a great
 influx of people from all parts of
 the world.

2. The discovery of gold in Nevada
 in 1859, which led to a great
 influx of people from all parts of
 the world.

3. The discovery of gold in Colorado
 in 1859, which led to a great
 influx of people from all parts of
 the world.

4. The discovery of gold in Arizona
 in 1863, which led to a great
 influx of people from all parts of
 the world.

5. The discovery of gold in New Mexico
 in 1861, which led to a great
 influx of people from all parts of
 the world.

Year	Population	Area
1800	1,000,000	1,000,000
1810	1,500,000	1,500,000
1820	2,000,000	2,000,000
1830	3,000,000	3,000,000
1840	4,000,000	4,000,000
1850	5,000,000	5,000,000
1860	6,000,000	6,000,000
1870	7,000,000	7,000,000
1880	8,000,000	8,000,000
1890	9,000,000	9,000,000
1900	10,000,000	10,000,000

The second of these is the fact that the
 population of the country has increased
 very rapidly since the year 1800. This
 increase has been the result of a
 number of causes, the most important
 of which are the following:

1. The discovery of gold in California
 in 1848, which led to a great
 influx of people from all parts of
 the world.

2. The discovery of gold in Nevada
 in 1859, which led to a great
 influx of people from all parts of
 the world.

3. The discovery of gold in Colorado
 in 1859, which led to a great
 influx of people from all parts of
 the world.

4. The discovery of gold in Arizona
 in 1863, which led to a great
 influx of people from all parts of
 the world.

5. The discovery of gold in New Mexico
 in 1861, which led to a great
 influx of people from all parts of
 the world.

Year	Population	Area
1800	1,000,000	1,000,000
1810	1,500,000	1,500,000
1820	2,000,000	2,000,000
1830	3,000,000	3,000,000
1840	4,000,000	4,000,000
1850	5,000,000	5,000,000
1860	6,000,000	6,000,000
1870	7,000,000	7,000,000
1880	8,000,000	8,000,000
1890	9,000,000	9,000,000
1900	10,000,000	10,000,000